



**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 2

Բնական պարտավորություններ

Կյանքի իրավունք

Աշակերտի կողմից երիտասարդի մահացու դանակահարություն դպրոցից դուրս.
խախտում

Kayak v. Turkey – 60444/08

ՀՈԴՎԱԾ 3

Բնական պարտավորություններ

Հաշմանդամություն ունեցողի անձի նկատմամբ դաժան և տևական հետապնդում
 հարևան երեխաների կողմից. *խախտում*

Dorđević v. Croatia - 41526/10

ՀՈԴՎԱԾ 4

Թրաֆիքինգ (մարդկանց առևտուր)

Բուլղարիայի քաղաքացի երիտասարդ կնոջ ենթադրյալ թրաֆիքինգի դեպքը
 հաստատող բավարար ապացույցներ ներկայացված չեն՝ *դիմումը վարույթ ընդունելը*
մերժվել է

M. and Others v. Italy and Bulgaria - 40020/03

ՀՈԴՎԱԾ 5

Հոդված 5 § 1(e)

Մտավոր թերզարգացած անձինք

Անձի հարկադիր պահումը հոգեբուժական հաստատությունում. *խախտում*

X v. Finland - 34806/04

ՀՈԴՎԱԾ 6

Հոդված 6 § 1 (քաղաքացիական)

Դատարանի մատչելիություն

Ներպետական դատարանների կողմից օտարերկրյա պետության դեմ հայցով
 միջազգային սովորության իրավունքի նորմերին համապատասխան կատարված
 ենթադրյալ ծանուցման ճանաչման մերժումը. *խախտում*

Wallishauser v. Austria- 156/04

Հոդված 6 § 1 (քրեական)

Անկախ դատարան

Անկողմնակալ դատարան

Զինվորական ծառայության մեջ գտնվող սպայի մասնակցությունը զինվորական
 գործերով քրեական դատարանում գործի քննությանը. *խախտում*

Ibrahim Gurkan v. Turkey) - 10987/10



Հոդված 6 § 2

Անմեղության կանխավարկած

Անմեղության կանխավարկածի կիրառումը ոչ քրեական գործերով դատավարություններում. *գործը ներկայացվել է Մեծ պալատի քննությանը*
[Allen v. the United Kingdom - 25424/09](#)

ՀՈԴՎԱԾ 7

Հոդված 7 § 1

Առավել ծանր պատիժ

Առավել ծանր պատիժ ենթադրյալ հետադարձ կիրառումը պատերազմական հանցագործությունների նկատմամբ. *գործը ներկայացվել է Մեծ պալատի քննությանը*

[Maktouf v. Bosnia and Herzegovina - 2312/08](#)

[\(Damjanovic v. Bosnia and Herzegovina - 34179/08](#)

ՀՈԴՎԱԾ 8

Արտաքսում

Երկարաժամկետ ռեզիդենտի արտաքսումը մի շարք հանցագործությունների կատարման համար մի քանի անգամ դատապարկելուց հետո - *խախտումը բացակայում է:*

[Samsonnikov v. Estonia - 52178/10](#)

ՀՈԴՎԱԾ 10

Արտահայտման ազատություն

Գովազդային պաստառի հրապարակային ցուցադրության արգելումը հրատարակիչների հակաբարոյական վարքագծի և կրոնական քարոզչություն իրականացնող ինտերնետային կայքին հղում անելու հետևանքով. *խախտում չկա*

[Mouvement raelien suisse v. Switzerland - 16354/06](#)

ՀՈԴՎԱԾ 11

Միավորման ազատություն

Եկեղեցու աշխատողների արհեստակցական միությունը գրանցելու մերժումը. *գործը ներկայացվել է Մեծ պալատի քննությանը*

[Sindicatul « Pastorul cel Bun v. Romania - 2330/09](#)

ՀՈԴՎԱԾ 13

Արդյունավետ փոխհատուցում

Սեփականատերերի փոխհատուցման վերաբերյալ կայացված վարչական որոշումների կատարման ապահովման նպատակով դատական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայությունը. *խախտում*

[Manushaqe Puto and Others v. Albania\) - 604/07 et al.](#)



ՀՈԴՎԱԾ 14

Խտրականություն (Հոդված 3)

Նիգերիացի մարմնավաճառի նկատմամբ ենթադրաբար ռասիստական շարժառիթով վատ վերաբերմունքի փաստով իրականացված ոչ արդյունավետ քննություն. *խախտում*

[B.S. v. Spain - 47159/08](#)

ՀՈԴՎԱԾ 18

Ոչ իրավաչափ նպատակներով կիրառված սահմանափակումներ

Ընդդիմության առաջնորդին ազատությունից զրկելն այլ պատճառներով, քան հանցագործություն կատարելու ողջամիտ կասկածի հիման վրա նրան իրավասու պետական մարմին բերելը. *խախտում*

[Lutsenko v. Ukraine - 6492/11](#)

ՀՈԴՎԱԾ 34

Պետիցիայի իրավունքի իրացման խոչընդոտումը

Իրավասու պետական մարմինների մերժումը դատապարտյալին տրամադրել իր գործում առկա որոշակի փաստաթղթեր, որոնք դատապարտյալին անհրաժեշտ էին Դատարանին ներկայացված իր դիմումը հիմնավորելու համար՝ *Հոդվածի 34-ի հետք անհամապատասխանություն*

ՀՈԴՎԱԾ 35

հոդված 35 § 1

Վեցամսյա ժամկետ

Դիմումի ներկայացումը Դիմողների հարազատի անհետացումից ինը տարի անց՝ գործի ներպետական քննության շարունակման պայմաններում. *նախնական առարկությունը մերժվել է*

[Er and Others v. Turkey - 23016/04](#)

ՀՈԴՎԱԾ 46

Պիլոտային վճիռ - Ընդհանուր միջոցներ

Պատասխանող պետությունը պետք է ներկայացնի պաշտպանության արդյունավետ միջոցներ՝ անշարժ գույքի սեփականատերերի փոխհատուցման վերաբերյալ վարչական վերջնական որոշումների կատարումն ապահովելու նպատակով

[Manushaqe Puto and Others v. Albania - 604/07 et al.](#)

Ընդհանուր միջոցներ

Պատասխանող պետությունը պետք է ընդունի համապատասխան օրենքներ՝ երաշխավորելու համար բանտարկյալների իրավունքը օգտագործել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ Եվրոպական դատարան ներկայացված դիմումներում նշված բողոքները հիմնավորելու համար



Vasiliy Ivashchenko v. Ukraine - 760/03

Ընդհանուր միջոցներ

Պատասխանող պետությունը պետք է ներկայացնի ձեռնարկված համապատասխան միջոցները երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի համար դատապարտումից հետո ծնողական իրավունքներից ինքնաբերաբար և մշտական կերպով զրկվելու ու դատական պաշտպանության իրավունքի հասանելիության բացակայության խնդիրների կապակցությամբ:

M.D. and Others v. Malta - 64791/10

Անհատական միջոցներ

Եվրոպական դատարանը հորդորում է Պատասխանող Պետությանը վերացնել կրոնական կազմակերպությանն արվող նվիրատվությունների շարունակվող անօրինական ավտոմատ հարկումը

Association Les Temoins de Jehovah v. France - 8916/05

ԳՈՐԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՄԵԾ ՊԱԼԱՏԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ

ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ՝ ԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ՄԵԾ ՊԱԼԱՏԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ

ԴԱՏԱՐԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Հեղազոտական գեկույցներ

Դատարանը՝ համառոտ

ՀՈԴՎԱԾ 2

Բնական պարտավորություններ Կյանքի իրավունք

**Աշակերտի կողմից երիտասարդի
մահացու դանակահարություն դպրո-
ցից դուրս . խախտում**

Kayak v. Turkey – 60444/08
Վճիռ 10.7.2012 [II Բաժանմունք]

Փաստական հանգամանքներ: Դիմու-
մատուները մայրն ու եղբայրն են 15-
ամյա տղայի, ով մահացել է 18-ամյա
աշակերտ Է.Գ.-ի կողմից կրտսեր
դպրոցի դիմաց դանակահարվելու
արդյունքում, որտեղ Է.Գ.-ն պանսիոներ
էր: 2002թ. սեպտեմբերին տուժածը, որն
այդ դպրոցի նախկին աշակերտ էր, իր
մի քանի ընկերների հետ գնացել է
կրտսեր դպրոց: Դպրոցի խաղա-
հրապարակում նրանք վիճաբանության
մեջ են մտել Է.Գ.-ի հետ, և խորացող
վեճի ընթացքում Է.Գ.-ն դանակահարել
է տուժածին դպրոցի ճաշարանից
գողացված հացի դանակով դպրոցից
150 մ հեռավորության վրա: Նույն օրը՝
ավելի ուշ, տղան մահացել է: 2002թ.
հոկտեմբերին կրտսեր դպրոցների
տեսչությունը նախաձեռնել է անհապաղ
հետաքննություն, որն ապացուցված չի
համարել այն, որ միջադեպը տեղի է
ունեցել դպրոցի վարչակազմի և
ուսուցչակազմի թողությունների հետևան-
քով: 2005թ. հոկտեմբերին Է.Գ.-ն
սպանության համար դատապարտվել է
ցմահ ազատազրկման, որն ավելի ուշ
նվազեցվեցվել է մինչև 6 տարի և 8
ամիս ազատազրկման: 2003թ.
հունիսին դիմումատուները վարչական
պատասխանատվության ենթարկելու

հայց են հարուցել, որը, սակայն,
Վարչական դատարանի կողմից
վարույթ չի ընդունվել: 2007թ. հունվա-
րին Վարչական գերագույն դատարանը
պաշտպանեց ստորին ատյանի
կայացրած վճիռը և 2008թ. հուլիսին
մերժեց դիմորդների կողմից ներկա-
յացված հայցը վերանայման մասին:

Իրավունք: Հոդված 2 – Դիմումատու-
ների ազգականը մահացել է ողբեր-
գական պայմաններում՝ մի շարք
անկանխատեսելի հանգամանքների
արդյունքում, և հնարավոր չի եղել
ապացուցել, որ տուժածը եղել է իրեն
սպանողի կողմից դանակահարվելու
նախապես ընտրված թիրախ: Թեև այն
հանգամանքը, որ 18 տարեկան
երիտասարդը դեռևս կրտսեր դպրոցում
էր, հակասում է ներկայումս դպրոցները
ղեկավարող կանոնադրական դրույթ-
ներին, կանոնակարգման մեջ առկա
բացթողումն ինքնին դեռևս բավարար
չէ Հոդված 2-ի շրջանակներում
քննարկվելու համար: Անհրաժեշտ է
նաև հիշատակել, որ այդ կապակ-
ցությամբ դպրոցի ղեկավարության
միջամտության բացակայությունը
տուժածի համար հանգեցրել է իրական
և անմիջական սպառնալիքի: Բացի այդ,
չի ապացուցվել, որ Է.Գ.-ն, նույնիսկ
ունենալով վարքի հետ կապված
որոշակի խնդիրներ, միջադեպից առաջ
որևէ ագրեսիվ կամ բռնի վարք է
դրսևորել, ինչը կարող էր տուժածի
կողմից հատուկ ուշադրության
արժանանալ: Առկա գործում, հե-
տևաբար, խնդիրը կայանում է նրանում,
որ պետությունը պարտավոր է
դպրոցների ղեկավարության միջոցով
պատասխանատվություն հանձն առնել

դպրոցներին վստահված աշակերտների հանդեպ: Այս համատեքստում դպրոցների առաջնային առաքելությունն էր պաշտպանել աշակերտներին բռնության ցանկացած տեսակից, որոնց նրանք կարող են ենթարկվել դպրոցի վերահսկողության ներքո գտնվող տարածքում: Թեև ուսուցչական կազմից չէր ակնկալվում անընդհատ հետևել բոլոր աշակերտներին, դպրոցի ներսում և դրսում առկա շարժերը պահանջում էին առավել զգոն վերահսկողություն: Դրանով բացահայտվեց, որ ուսուցչական անբավարար քանակի հետևանքով աշակերտների վերահսկողությունը երբեմն վստահվել է հենց իրենց՝ աշակերտներին: Դպրոցի ղեկավարությունը զգուշացրել էր իրավասու մարմիններին դպրոցի շրջակայքի անվտանգությունը ապահովելու հարցում առկա խնդիրների մասին և առանձնահատուկ աջակցություն էր խնդրել, սակայն անօգուտ: Բացի այդ, օրինախախտը հնարավորություն էր ունեցել սպանության գործիքը՝ դանակը, գողանալ դպրոցի տարածքից, այն ժամանակ, երբ նա պետք է լիներ ուսուցիչների վերահսկողության ներքո: Թեև ուսուցչական կազմը, զգուշացվելով բախման մասին, փորձել էր միջամտել, Դատարանը ավստոսանքով նշել է, որ ուսուցիչներից մեկը, տեղեկանալուց հետո այն մասին, որ Է.Գ.-ն պատրաստվում է դանակ վերցնել ճաշարանից, պարզապես մի քանի րոպե նրան սպասել է դռան մոտ՝ առանց կանգնեցնելու փորձ անելու: Ելնելով դեպքի հանգամանքներից՝ Դատարանը գտել է, որ ներպետական իշխանությունները չեն կարողացել ապահովել դպրոցի տարածքների

նկատմամբ վերահսկողությունը, ինչը թույլ է տվել մարդասպանին ներս մտնել:

Եզրակացություն՝ խախտում (5 ձայն ընդդեմ 2-ի):

Դատարանը հետագայում միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանի որ գործի քննությունը չի իրականացվել «ողջամիտ ժամկետ»-ի պահանջին հանապատասխան:

Հոդված 41: 15 հազար եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, և 4513 եվրո դիմումատու մորը՝ որպես նյութական վնասի հատուցում:

ՀՈԴՎԱԾ 3

Բնական պարտավորություններ

Հաշմանդամություն ունեցողի անձի նկատմամբ դաժան և տևական հետապնդում հարևան երեխաների կողմից. խախտում

Dorđević v. Croatia - 41526/10
Վճիռ 24.7.2012 [I Բաժանմունք]

Փաստական հանգամանքներ: Առաջին դիմումատուն, ով մտավոր և ֆիզիկական հաշմանդամ էր, ապրել է իր մոր հետ /երկրորդ դիմումատու/՝ նկուղային հարկում գտնվող բնակարանում: Երկու դիմումատուներն էլ գանգատվել են, որ 2008թ. հուլիսից մինչև 2011թ. փետրվար ամիսների ընթացքում իրենք շարունակաբար հետապնդումների են ենթարկվել

մոտակա տարրական դպրոցի աշակերտների կողմից, և իշխանությունները նրանց պատշաճ կերպով չեն պաշտպանել: Նշված ժամանակահատվածում արձանագրվել են մի շարք միջադեպեր, ինչպիսիք են երեխաների կողմից դիմումատուների դռան զանգը անհարկի ժամերին զանգելը, առաջին դիմումատուի վրա թքելը, նրան խփելն ու հրմշտելը, նրա ձեռքերը ծխախոտներով վառելը, հայցվորների պատշգամբն ավերելը և նրանց հասցեին անպարկեշտ բացականչություններ ուղղելը: Հարձակումների արդյունքում առաջին դիմումատուն խորապես լարվել, վախեցել և անհանգստացել է: Նրանք բազմաթիվ առիթներով բողոքել են տարբեր իրավասու մարմինների՝ ներառյալ սոցիալական ծառայություններին և մարդու իրավունքների պաշտպանին: Նրանք բազմիցս զանգահարել են նաև ոստիկանություն՝ հաղորդելով միջադեպերի մասին և նրանցից օգնություն խնդրելով: Յուրաքանչյուր ահազանգից հետո ոստիկանությունը ժամանել է դեպքի վայր՝ երբեմն խիստ ուշացած և երբեմն էլ պարզապես երեխաներին ցրվելու կամ չաղմկելու կոչ անելու համար: Ոստիկանությունը նաև հարցաքննել է մի շարք աշակերտների և եզրակացրել, որ թեև վերջիններս ընդունել են, որ բռնություններ են գործադրել առաջին դիմումատուի հանդեպ, այնուամենայնիվ, նրանք շատ երիտասարդ են քրեական պատասխանատվության ենթարկվելու համար:

Իրավունք: Հոդված 3 (առաջին դիմումատու) - Առաջին դիմումատուն ենթարկվել է շարունակական բռնու-

թյունների և արդյունքում երկար ժամանակ անօգնականության և վախի զգացողություն է ունեցել: Մի միջադեպում նա նաև մարմնական վնասվածք է ստացել: Նման վատ վերաբերմունքը բավարար չափով լուրջ է 3-րդ հոդվածի պաշտպանությունը առաջացնելու համար:

3-րդ հոդվածին հակադրվող բռնության դրսևորումները սովորաբար ենթադրում են օրինախախտների հանդեպ քրեական օրենսդրության կիրառում: Ինչևէ, նշված գործում հաստատված օրինախախտների մեծ մասը 14 տարեկանից ցածր երեխաներ են եղել, ովքեր, ըստ ներպետական օրենսդրության, չէին կարող ենթարկվել քրեական պատասխանատվության: Հնարավոր է նաև, որ բողոքի առարկա դարձած գործողություններից ոչ մեկն առանձին վերցրած հանցակազմ չի պարունակում, բայց իրենց ամբողջության մեջ միջադեպերը անհամատեղելի են 3-րդ հոդվածի պահանջների հետ: Հետևաբար, առաջին դիմումատուի գործը պետության համար առաջացնում է դրական պարտավորություններ քրեական օրենսդրության իրավասության շրջանակից դուրս գտնվող մի իրավիճակում, երբ իրավասու պետական մարմինները տեղյակ են ֆիզիկական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի դեմ ուղղված լուրջ բռնության մասին: Իշխանություններն ի սկզբանե տեղյակ են եղել ճնշումների մասին և հետևաբար գտնվում էին առաջին դիմումատուի պաշտպանելուն ուղղված բոլոր ողջամիտ միջոցները գործադրելու պարտավորության ներքո: Թեև ոստիկանությունը հարցաքննել էր

ներգրավված երեխաներից մի քանիսին, և դպրոցի ղեկավարությունը խնդիրը քննարկել էր աշակերտների և ուսուցիչների հետ, որևէ լուրջ փորձ չի կատարվել իրավիճակի իրական բնույթը գնահատելու համար կամ առկա է եղել համակարգային մոտեցման պակաս՝ համարժեք ու համապարփակ միջոցների բացակայության արդյունքում: Ոստիկանության բացահայտումներին երբեք չեն հետևել կոնկրետ գործողություններ. ոչ մի ռազմավարություն չի մշակվել կամ մոնիտորինգային մեխանիզմներ չեն ներդրվել հետագա ճնշումները կանխատեսելու և կանխելու ուղղությամբ: Դատարանին հատկապես զարմացրել է սոցիալական ծառայությունների մասնակցության պակասը և իրավասու փորձագետների ներառվածությունը հաստատող փաստերի բացակայությունը, այն դեպքում, երբ վերջիններս կարող էին տրամադրել պատշաճ օգտակար տեղեկատվություն և աշխատել խնդրո առարկա երեխաների հետ: Այսպիսով, իշխանությունները չեն ձեռնարկել բոլոր պահանջվող միջոցները՝ առաջին դիմումատուին պաշտպանելու համար՝ անտեսելով շարունակական բռնության իրական և կանխատեսելի վտանգը:

Եզրակացություն: խախտում (միաձայն):

Հոդված 8. (Երկրորդ դիմումագրու) Առաջին դիմումատուի նկատմամբ գործադրված ճնշումները անխուսափելիորեն վնասակար ազդեցություն են գործել նաև նրա մոր՝ երկրորդ դիմումատուի անձնական և ընտանեկան կյանքի վրա: Գտնելով, որ

իշխանություններին չի հաջողվել համարժեքորեն կանխել առաջին հայցվորի նկատմամբ կիրառվող հետագա ճնշումները, Դատարանը չէր կարող չեզրակացնել, որ վերջիններիս չի հաջողվել համապատասխան պաշտպանություն ապահովել նաև երկրորդ դիմումատուի համար:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41. 11.500 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Խոշտանգում Արդյունավետ նախաքննություն

**Ոստիկանության կողմից դաժան վերաբերմունքի վերաբերալ մեղադրանքի ուղղությամբ ոչ պատշաճ նախաքննության իրականացման կամ վնասվածքների արդյունքում տուժածին օրինական ներկայացուցիչ տրամադրելու պահանջի մերժում.
խախտումներ**

Savitsky v. Ukraine - 38773/05
Վճիռ 26.7.2012 [V Բաժանմունք]

Փաստական հանգամանքներ: Գործի փաստական հանգամանքները վիճելի են: Հայցվորը պնդում է, որ 1998թ. օգոստոսին ոստիկանության երեք աշխատակիցների կողմից ենթարկվել է լուրջ բռնության, որոնք իրեն ձերբակալել են փողոցում՝ բենզալցակայանի աշխատողի հաղորդման հիման վրա, ով սխալմամբ կասկածել էր նրան հարբած լինելու մեջ: Ըստ ոստիկանների, նրանք հայցվորին գտել են մի զբոսայգու ցանկապատի մոտ պառկած, իրանի և ստամոքսի շրջանում

սուր ցավերից բողոքելիս: Հայցվորը տարվել է հիվանդանոց, որտեղ վերջինիս մոտ ախտորոշել են երկու ողի կոտրվածք և ողնաշարի վնասվածք: Նա ի վիճակի չի եղել քայլել առանց կողմնակի օգնության և գրանցվել է որպես հաշմանդամ: Հայցվորի ներկայացրած բողոքի հիման վրա դատախազությունը հարուցել է քրեական գործ: Հայցվորը օրինական ներկայացուցիչ ունենալու հնարավորություն է խնդրել՝ հաշվի առնելով իր ֆիզիկական հաշմանդամությունը, սակայն մերժում է ստացել: Նախաքննության մարմինները հետագայում կարճել են քրեական գործը՝ գտնելով, որ հայցվորը խիստ հարբած է եղել և վնասվածքները ստացել է սեփական անփութության հետևանքով՝ ցանկապատից վայր ընկնելու արդյունքում: Այդ որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ ներպետական դատական ատյանների կողմից:

Իրավունք - Հոդված 3

(ա) *Ընթացակարգային առումով:* Դատարանը գտել է, որ դիմումատուի՝ ոստիկանության աշխատակիցների կողմից իր հանդեպ բռնություն կիրառվելու մասին մեղադրանքի քննությունը կատարվել է ոչ արդյունավետ, Կոնվենցիայի դրույթներին անհամապատասխան: Նախաքննությունը չի եղել անաչառ, օբյեկտիվ և ամբողջական, և իրականացված գործողությունների ընդհանուր տևողությունը չափազանց երկար է եղել: Բացի այդ, չի ապահովվել դիմումատուի արդյունավետ մասնակցությունը գործի քննությանը: Թեև նա ունեցել է ծանր

վնասվածքներ և չի ունեցել իրավաբանական կրթություն, իր նկատմամբ վատ վերաբերմունքի մասով իր պնդումները հիմնավորելու համար իրեն անվճար օրինական ներկայացուցիչ տրամադրելու վերաբերյալ խնդրանքները մերժվել է: Կոնվենցիայի նպատակն է իրավունքների «գործնական և արդյունավետ» երաշխիքը: Համապատասխանաբար, գործի առանձնահատուկ հանգամանքներից բխում է, որ պետության ընթացակարգային պարտավորությունները՝ ապահովել տուժողի արդյունավետ մասնակցությունը վատ վերաբերմունքի վերաբերյալ իր բողոքների ուղղությամբ կատարվող նախաքննությանը, պետք է ընդլայնվեն՝ ներառելով նաև անվճար օրինական ներկայացուցիչ ունենալու հնարավորության հասանելիությունը: Տվյալ պահին գործող ներպետական օրենսդրությունը որևէ իրավական օգնություն չէր սահմանում դիմումատուի իրավիճակում հայտնված որևէ մեկի համար և չի երևացել, որ սոցիալական աջակցության կենտրոնները և իրավաբանական խորհրդատվության գրասենյակներն ի վիճակի են եղել դիմումատուին ապահովել անհրաժեշտ իրավական ներկայացուցչականությամբ: Դիմումատուի դիմումները՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանին և այլ մարմինների, ևս չեն հանգեցրել պատշաճ արդյունքների: Այսպիսով, պետությունը չի կատարել դիմումատուին անվճար օրինական ներկայացուցչով ապահովելու իր պարտականությունը՝ ապահովելու համար գործի ներպետական քննությանը վերջինիս արդյունավետ մասնակցությունը:

Եզրակացություն. խախտում (միաձայն)

(բ) *Էական կողմ*: Ոստիկանության աշխատակիցները պնդել են, որ իրենք ժամանել են բենզալցակայանի աշխատողի կողմից ահազանգ ստանալուց քիչ ժամանակ անց և անմիջապես ուղևորվել են դեպի դիմացի այգի, որտեղ գտել են հայցվորին՝ արդեն իսկ լրջորեն վնասված վիճակում: Ինչևէ, նրանք չեն բացատրել՝ ինչու են որոշել փնտրել դիմումատուին, որն արդեն լքել էր բենզալցակայանն առանց իրավախախտում կատարելու և այլևս որևէ կերպ չէր անհանգստացնում բենզալցակայանի աշխատողին: Նույնիսկ հիմնվելով ոստիկանների ցուցմունքների վրա, համաձայն որոնց ժամանակահատվածը այն պահի միջև, երբ դիմումատուին վերջին անգամ տեսել են նորմալ առողջական վիճակում և այնուհետև ոստիկանությունը նրան գտել է արդեն լրջորեն վիրավորված վիճակում, կարճ է, պետությունը 3-րդ հոդված շրջանակներում պարտավոր էր ապահովել բավարար և համոզիչ բացատրություն հայցվորի ստացած վնասվածքների վերաբերյալ: Այդ խոչընդոտն այդպես էլ չի հաղթահարվել՝ կապված ներպետական հարցումներում և հետաքննություններում առկա լուրջ բացթողնների հետ, միջադեպի պաշտոնական մեկնաբանությունը հիմնավորող ապացուցային բազան թույլ է, իսկ հայցվորի պնդումները արդյունավետորեն չեն քննվել և դա հիմնավորող ապացույցները պատշաճ կերպով չեն հավաքվել: Հայցվորի ենթադրությունները հաստատվել են գործում առկա

անուղղակի ապացույցներով, և համահունչ են դրանց: Հաշվի առնելով նրա ստացած վնասվածքների բացառիկ ծանրությունը և այն փաստը, որ դրանք հասցվել են ստորացնելու և ահաբեկելու նպատակով՝ վատ վերաբերմունքը հանգեցրել է խոշտանգումների:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Դատարանը նաև գտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում և այն, որ պետությունը չի կատարել իր պարտավորությունները 34-րդ հոդվածի ներքո՝ կապված որոշակի փաստաթղթեր չտրամադրելու հետ, այն դեպքում, երբ դրանք պահանջվել են ներպետական դատարանի, ապա՝ Եվրոպական դատարանի կողմից:

Հոդված 41. 100,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում և 50,994.05 եվրո՝ որպես նյութական վնասի փոխհատուցում:

Անմարդկային պատիժ Ստորացուցիչ պատիժ

Ցմահ բանտարկություն՝ միայն մահացու հիվանդության կամ գործունակության լուրջ կորստի դեպքում ազատ արձակման հնարավորությամբ. *ցործը ներկայացվել է Մեծ պալատի քննությանը*

Vinter and Others v. United Kingdom -
66069/09, 130/10 and 3896/10
Վճիռ 17.1.2012 [IV Բաժանմունք]

Անգլիայում և Ուելսում սպանությունը պարտադիր պատժվում է ցմահ ազատազրկմամբ: Բոլոր երեք

դիմումատուները ենթարկվել են ցմահ ազատազրկման սպանության համար: Նման որոշումը նշանակում է, որ վերջիններիս հանցագործություններն այնքան ծանր են դիտարկվել, որ նրանք պետք է իրենց ամբողջ կյանքն անցկացնեն բանտում, եթե միայն Պետքարտուղարը չօգտագործի նրանց ազատելու իր իրավունքը՝ հիմնված կարեկցանքի վրա, եթե առկա են բացառիկ հանգամանքներ՝ մահացու հիվանդություն կամ գործունակության լուրջ կորուստ: Եվրոպական դատարանին ուղղված գանգատում դիմումատուները նշել են, որ իրենց դեպքում ցմահ ազատազրկումը նշանակում է, որ իրենց դատավճիռները, փաստացիորեն, կրճատման ենթակա չեն, ինչը խախտում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դրույթները:

2012թ. հունվարի 17-ին ընդունված վճռում (տես՝ [Նախադեպային տեղեկատու No. 148](#)) Դատարանը 4 ձայն ընդդեմ 3-ի հարաբերակցությամբ վճռեց, որ 3-րդ հոդվածի խախտում առկա չէ:

2012թ. հուլիսի 9-ին դիմումատուների խնդրանքով գործը փոխանցվել է Մեծ պալատին:

ՀՈԴՎԱԾ 4

Թրաֆիքինգ (մարդկանց առևտուր)

Բուլղարիայի քաղաքացի երիտասարդ կնոջ ենթադրյալ թրաֆիքինգի դեպքը հաստատող բավարար ապացույցներ ներկայացված չեն. դիմումը վարույթ ընդունելը մերժվել է

M. and Others v. Italy and Bulgaria

- 40020/03

Վճիռ 31.7.2012 [II Բաժանմունք]

Փաստական հանգամանքներ: Դիմողներն ազգությամբ ռումինացի Բուլղարիայի քաղաքացիներ են: Առաջին Դիմողը երկրորդ և երրորդ Դիմողների դուստրն է: 2003թ. նրանք ընտանիքով մեկնել են Իտալիա, Դիմողների պնդմամբ, որպես աղախիններ աշխատելու նպատակով: Իտալիայում առաջին Դիմողն ամուսնացել է Սերբիայի քաղաքացու հետ: Ենթադրվում է, որ ամուսնության ակտը կատարվել է այն բանից հետո, երբ փեսան որոշակի գումար (մի քանի հազար եվրո) է վճարել հարսի հորը: Դիմողները պնդում են, որ ծնողները հարկադրված էին վերադառնալ Բուլղարիա, մինչդեռ նրանց դուստրը (առաջին Դիմողը) մնացել է Իտալիայում, որտեղ ենթարկվել է վատ վերաբերմունքի և հարկադիր աշխատանք է կատարել իր ամուսնու համար: Առաջին դիմողի մայրը վերադարձել է Իտալիա և բողոք ներկայացրել ոստիկանություն: Բողոքներ են ներկայացվել նաև Բուլղարիայի և Իտալիայի տարբեր պետական մարմիններ: Այնուհետ Իտալիայի ոստիկանության աշխատակիցները, ներխուժելով փեսայի տուն, այնտեղ գտել են առաջին դիմողին և կատարել մի շարք ձերբակալություններ: Այդուհանդերձ իրավասու պետական մարմինների որոշեցին քրեական գործ չհարուցել այն բանից հետո, երբ գտան, որ ապացույցները վկայում էին այն մասին, որ ամուսնությունը կայացել էր ամուսինների փոխադարձ համաձայնությամբ:

Իրավունք: Հոդված 3: Եվրոպական դատարանը գտնում է, որ Իտալիան խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հոդված 3-ը, քանի որ Իտալիայի իրավասու պետական մարմիններն արդյունավետ քննություն չեն իրականացրել պարզելու 'Դիմողների' առաջին Դիմողի հանդեպ վատ վերաբերմունքի մասին հաղորդման հիմնավորվածությունը: Միաժամանակ Դատարանը գտնում է, որ առաջին Դիմողի բողոքն այն մասին, որ Իտալիայի իշխանությունները բավարար միջոցներ չեն ձեռնարկել ենթադրյալ անազատությունից իրեն ազատելու ուղղությամբ, անհիմն է. հետևաբար Իտալիայի կողմից այս առումով Հոդված 3-ի խախտումը բացակայում է:

Հոդված 4: Սույն գործով կողմերը ներկայացրել են իրարամերժ փաստական հանգամանքներ, իսկ դեպքի առիթով Իտալիայի իրավասու մարմինների կողմից իրականացված ոչ բավարար քննության հետևանքով Դատարանը տիրապետում է գործին վերաբերող փոքրաքանակ ապացույցների: Դատարանը, հետևաբար, սույն գործով իր որոշումը կայացնելիս այլ ելք չուներ, քան հիմնվել կողմերի ներկայացրած սահմանափակ ապացուցողական բազայի վրա:

(ա) Բողոք Իտալիայի դեմ

(1) Գործի հանգամանքների վերաբերյալ վարկածը՝ ըստ Դիմողների: Գործի հանգամանքները, Դիմողների ներկայացմամբ, կարող էին որակվել որպես

թրաֆիքինգ, սակայն ներկայացված ապացույցները բավարար հիմք չեն տալիս որոշելու սույն վարկածի հավաստիությունը: Վերոշարադրյալից հետևում է, որ այն պնդումները, թե տեղի է ունեցել թրաֆիքինգի դեպք, չեն ապացուցվել: Թրաֆիքինգի դեպքի չապացուցված լինելը բացառում է Իտալիայի կողմից Կոնվենցիայի Հոդված 4-ով նախատեսված պոզիտիվ պարտավորության խախտումը, այն է՝ պատշաճ իրավակարգավորիչ համակարգի շրջանակներում քրեականացնել թրաֆիքինգի հանցագործությունը և քրեական հետապնդում հարուցել այդ հանցագործության յուրաքանչյուր դեպքի կապակցությամբ: Ինչ վերաբերում է անձի համար վտանգ ներկայացնող իրավիճակի կանխմանն ուղղված, Պետության կողմից ձեռնարկված միջոցներին, ապա Դատարանն արդեն տվել է այս կապակցությամբ Իտալիայի կառավարության ձեռնարկած գործողությունների իրավական գնահատականը, այն է՝ Իտալիայի պետական մարմինները ձեռնարկել են բոլոր անհրաժեշտ գործողություններն ազատելու առաջին Դիմողին այն վիճակից, որում նա հայտնվել էր: Այդուհանդերձ, ինչպես վերը նշվեց, Դատարանը գտնում է, որ Իտալիան խախտել է Հոդված 3-ը քննության պատշաճ ընթացակարգի իմաստով, քանզի, ի դեմս քրեական հետապնդման մարմինների, չի իրականացրել գործի արդյունավետ քննություն: Դատարանը, հետևաբար, գտնում է, որ որևէ անհրաժեշտություն չկա անդրադառնալու դիմումի այդ մասին:

Եզրակացություն՝ անընդունելի
(բացահայտորեն անհիմն) :

(2) Գործի հանգամանքների վերաբերյալ վարկածը՝ ըստ Իտալիայի կառավարության: Նույնիսկ, եթե Դիմողի հայրը ամուսնության հետ կապված դրամական գումար է ստացել, նմանատիպ դրամական ներդրումը չի կարող համարվել Դիմողի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման դիմաց գնի վճարում. փաստ, որի առկայության դեպքում, խոսք կգնար ստրկության մասին: Այդ գումարը, կարելի է ողջամտորեն դիտարկել որպես նվեր, որը ամուսնության կապակցությամբ արվել է մի ընտանիքի կողմից մյուսին. այդպիսի ավանդույթ գոյություն ունի տարբեր ժողովուրդների մշակույթում: Որևէ ապացույց չկա նաև, որ առաջին Դիմողը ենթարկվել է ճորտության կամ հարկադիր աշխատանքի: Սույն տեսակետն ամրապնդվում է նաև նրանով, որ հետազայում արված բժշկական փորձաքննության արձանագրությունները բավարար չեն փաստելու, որ առաջին Դիմողն իրականում ենթարկվել է վատ վերաբերմունքի կամ շահագործման (վերջիններս հանդիսանում են թրաֆիքինգի սահմանման բովանդակությունը կազմող տարրերը): Նմանապես զուտ որոշակի գումարի վճարումը բավարար չէ պնդելու համար, որ իրականում տեղի է ունեցել թրաֆիքինգի դեպք: Դատարանին չի ներկայացվել նաև որևէ ապացույց առ այն, որ խնդրո առարկա ամուսնության ակտը տեղի է ունեցել սեռական կամ այլ տեսակի շահագործման նպատակով, և

որևէ հիմք չկա համարելու, որ սույն ամուսնությունը կայացել է ավանդական ամուսնական ակտին բնորոշ շարժառիթներից տարբերվող դրդապատճառներով: Չկան բավարար ապացույցներ առ այն, որ առաջին Դիմողին ստիպել են ամուսնանալ: Առաջին Դիմողն իր ցուցմունքում չի նշել, որ ամուսնությունը տեղի է ունեցել ոչ իր կամավոր համաձայնությամբ և ընդգծել է, որ իրեն չեն հարկադրել մտնել սեռական հարաբերության մեջ: Ամփոփելով վերոշարադրյալը՝ Դատարանը գտավ, որ Իտալիայի իշխանությունների կողմից ներկայացված փաստական հանգամանքների շրջանակներում Հոդված 4-ի խախտում չկա:

(ա) Բողոք Բուլղարիայի դեմ

Եթե թրաֆիքինգի ենթադրյալ դեպքը սկսվել է Բուլղարիայում, ապա Դատարանն իրավասու է քննության առնել Բուլղարիայի գործողությունների համապատասխանությունը իր՝ Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների հետ, մասնավորապես Բուլղարիայի պարտավորությունը իր իրավասության և լիազորությունների շրջանակներում պաշտպանել, ապահովել առաջին Դիմողի անվտանգությունը թրաֆիքինգից և քննություն իրականացնել պարզելու՝ արդյոք առաջին Դիմողը ենթարկվել է թրաֆիքինգի: Սահմանային թրաֆիքինգի դեպքերում անդամ Պետությունները նաև պարտավոր են արդյունավետորեն համագործակցել այլ Պետությունների համապատասխան իրավասու մարմինների հետ թրաֆիքինգի այն դեպքերի քննության

կապակցությամբ, որոնք տեղի են ունեցել իրենց տարածքներից դուրս: Այդուհանդերձ, ինչպես վերը նշվեց, գործի հանգամանքները չեն վկայում, որ տեղի է ունեցել թրաֆիքինգի դեպք: Ավելին՝ Դիմողները չեն բողոքում, որ Բուլղարիայի կառավարությունը քննություն չի իրականացրել հնարավոր թրաֆիքինգի դեպքը պարզելու և բացահայտելու նպատակով: Ի վերջո, Բուլղարիայի կառավարությունն աջակցել է Դիմողներին և մշտական կապ է պահպանել Իտալիայի իշխանության իրավասու մարմինների հետ:

Եզրակացություն՝ անընդունելի (բացահայտորեն անհիմն):

(Տես նաև *Rantsev v Cyprus and Russia* թիվ 25965/04, 7 հունվարի, 2010թ., *Նախադեպային տեղեկատու No. 126*)

ՀՈԴՎԱԾ 5

Հոդված 5, § 1(e)

Մտավոր թերզարգացած անձինք

Անձի հարկադիր պահումը հոգեբուժական հաստատությունում. խախտում

X v. Finland - 34806/04

Վճիռ 3.7. 2012 [IV Բաժանմունք]

Ստորև տես Հոդված 8, էջ 15

ՀՈԴՎԱԾ 6

Հոդված 6 § 1 (քաղաքացիական)

Դատարանի մատչելիություն

Ներպետական դատարանների կողմից օտարերկրյա պետության դեմ հայցով միջազգային սովորության

իրավունքի նորմերին համապատասխան կատարված ենթադրյալ ծանուցման ճանաչման մերժումը. խախտում

Wallishauser v. Austria- 156/04

Վճիռ 17.7.2012 [I Բաժանմունք]

Փաստական հանգամանքներ: 1998թ. Դիմողը, որը Վիեննայում ԱՄՆ-ի դեսպանությունում աշխատել է որպես լուսանկարիչ. բողոք է ներկայացրել ԱՄՆ-ի դեմ՝ պահանջելով վճարել չվճարված վարձատրությունը: Վաշինգտոնում Ավստրիայի դեսպանության աշխատակիցը, ստանալով բողոքը և կից ներկայացված փաստաթղթերը, պատշաճ ձևով այն հանձնել է ԱՄՆ-ի պետական դեսպարտամենտ, սակայն փաստաթղթերը վերադարձվել են՝ Ավստրիայի արտաքին գործերի նախարարությանը հասցեագրված գրությամբ՝ առ այն, որ ԱՄՆ-ն հաստատում է իր անձեռնմխելիությունը (իմունիտետը) Դիմողի կողմից ներկայացված ցանկացած բողոքից կամ հայցից: Դիմողն այնուհետև դիմել է Ավստրիայի դատարան՝ խնդրելով գործը քննել և վճիռ կայացնել պատասխանողի բացակայությամբ: Դատարանը մերժել է հայցը այն հիմքով, որ պատասխանող կողմը պատշաճորեն ծանուցված չի եղել իր դեմ ներկայացված հայցի մասին: Դիմողի՝ դատարանին ներկայացրած հաջորդ փաստաթղթում դատարանին խնդրվել է կիրառել այսպես կոչված ենթադրյալ ծանուցման ինստիտուտը, այսինքն պատասխանողին դատակոչել՝ այդ մասին ծանուցումը հրապարակելով մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցում (միջոցներում):



Որպես այլընտրանք՝ Դիմողը դատարանին առաջարկել է ծանուցագիրն ուղարկել պատասխանողի՝ դատարանի կողմից նշանակված ներկայացուցչին: Դիմողի՝ վերը նշված երկու առաջարկներն էլ դատարանը մերժել է այն պատճառաբանությամբ, որ Ավստրիայի օրենսդրության համաձայն՝ ծանուցագիրը պետք է ուղարկվի Ավստրիայի արտաքին գործերի նախարարության միջոցով:

Իրավունք: Հոդված 6 § 1 - Անվիճարկելի է այն փաստը, որ ԱՄՆ-ը չէր կարող իրավաչափորեն հիմնվել իր դեմ հարուցվող վարույթից իրավական անձեռնմխելիության վրա: Սակայն, ի տարբերություն *Cudak v. Lithuania* և *Sabeh El Leil v. France* գործերում՝ Դատարանի որդեգրած դիրքորոշման (այդ գործերը առնչվում էին ներպետական մարմինների որոշումներին, որոնցով բավարարվում էին Պետության անձեռնմխելիության հիման վրա գործի ընդդատության որոշումը վիճարկող բողոքները)¹ սույն գործը կապված է ԱՄՆ-ի կողմից իր դեմ ներկայացված հայցով դատականչի ծանուցագիրն ընդունելու մերժումը Ավստրիայի իշխանության կողմից իրավաչափ ճանաչելու հետ: Նման դիրքորոշումը հիմնված է Ավստրիայի դատարանների այն մոտեցման վրա, որ օտարերկրյա պետության դեմ քաղաքացիական հայցով այդ պետությանը հասցեագրվող դատակոչի

կատարումը կամ դրա մերժումը ինքնին ինքնիշխան (սուվերեն) ակտ է, որը պետք է ճանաչվի անկախ այն հանգամանքից, թե ինչ պահանջ էր ընկած ներկայացված հայցի հիմքում: Դատարանն այդուհանդերձ գտավ, որ այն կանոնը, ըստ որի՝ Պետության դեմ գործի հարուցման համար անհրաժեշտ փաստաթղթերի՝ պատշաճ կարգով հանձնում է համարվում դրանց ստացումը համապատասխան պետության արտաքին գործերի նախարարության կողմից, կիրառվում է Ավստրիայի նկատմամբ որպես միջազգային սովորության իրավունքի նորմ²: Ավստրիայի դատարանները չեն հետազոտել վերը նշված նորմը: Փոխարենը սույն դատարանները նշել են, որ նման դեպքերը կարգավորող միջազգային պայմանագիր չի կնքվել, և ներպետական օրենսդրության մեջ նույնպես չկա նորմ, որով գործով պատասխանող օտարերկրյա պետության արտաքին գործերի նախարարությանը համապատասխան ծանուցագրի և կից փաստաթղթերի հանձնումը համարվում է պատշաճ ծանուցում: Այսպիսով, իրավաչափ ճանաչելով ԱՄՆ-ի կողմից իրեն ներկայացված դատակոչի, հետևաբար նաև տվյալ դատավարությանը մասնակցելու մերժումը որպես այդ պետության կողմից

¹ *Cudak v. Lithuania* [GC], թիվ 15869/02, 23 մարտի, 2010, Նախադեպային տեղեկատու No. 128; *Sabeh El Leil v. France* [GC], թիվ. 34869/05, 29 հունիսի, 2011, Նախադեպային տեղեկատու No. 142.

² Ավստրիայի կողմից բացակայում է որևէ առարկություն Միջազգային իրավունքի հանձնաժողովի՝ 1991թ. ընդունած 20 Հոդվածների նախագծի նկատմամբ, որը նախատեսում է խնդրո առառկա կանոնը կամ նմանատիպ դրույթի նկատմամբ, որը սահմանված է Պետությունների և նրանց գույքի յուրիսդիկցիոն անձեռնմխելիության մասին ՄԱԿ-ի՝ 2004թ. Կոնվենցիայում:

կայացված ինքնիշխան ակտ և հրաժարվելով Դիմողի գործի քննությունից՝ Ավստրիայի դատարանները խախտել են Դիմողի դատական պաշտպանության իրավունքի հասանելիության բուն էությունը:

Եզրակացություն՝ խախտումն (միաձայն):

Հոդված 41: 12000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Հոդված 6 § 1 (քրեական)

Անկախ դատարան Անկողմնակալ դատարան

Զինվորական ծառայության մեջ գտնվող սպայի մասնակցությունը զինվորական գործերով քրեական դատարանում գործի քննությանը. խախտում

Ibrahim Gurkan v. Turkey - 10987/10
Վճիռ 3.7.2012 [Մաս II]

Փաստական հանգամանքներ: 2008թ. զինվորական դատախազը դատարան ներկայացրեց մեղադրական եզրակացություն Դիմողի դեմ, ով այդ ժամանակ ծառայում էր Թուրքիայի ռազմածովային ուժերում: Զինվորական գործերով քրեական դատարանը, որը կազմված էր իրավաբանական կրթություն չունեցող զինված ուժերի սպայից և զինվորական գործերով երկու դատավորից, Դիմողին մեղավոր ճանաչեց ըստ ներկայացված մեղադրանքի և նրան դատապարտեց

երկու ամիս տասնհինգ օր ժամկետով ազատազրկման:

Իրավունք: Հոդված 6 § 1 - Նախորդ գործի քննության ժամանակ³ 2004թ. Եվրոպական դատարանը մերժեց Թուրքիայի զինվորական գործերով քրեական տրիբունալների անկախության և անկողմնակալության վերաբերյալ բողոքը՝ գտնելով, որ առկա են բավարար երաշխիքներ՝ նման դատարանների անդամների անկախությունն ու անկողմնակալությունն ապահովելու համար: Այդուհանդերձ 2009թ. Թուրքիայի Սահմանադրական դատարանը որոշեց, որ խնդրո առարկա ժամանակահատվածում գործող ներպետական օրենսդրությունը բավարար երաշխիքներ չէր սահմանում՝ ապահովելու համար զինվորական գործերով քրեական դատարանների անդամներին՝ արտաքին ճնշումների ռիսկից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հետևաբար համապատասխան դիմումի հիման վրա պետք է վերաքննի սույն խնդիրը: Քանի որ անառարկելի է, որ ոչ իրավաբան դատավորների մասնակցությունը գործի քննությանն ինքնին չի հակասում Կոնվենցիայի Հոդված 6-ին, Դատարանը քննության չառավ զինված ուժերի սպայի իրավաբանական որակավորման բացակայությունը՝ որպես նրա անկախությունն ու անկողմնակալությունը կասկածի տակ դնող հանգամանք: Սակայն հարկ է նկատի ունենալ այն փաստը, որ սույն

³ *Onen v. Turkey* (որոշում), թիվ 32860/96, 10 փետրվար 2004.

սպան, կատարելով դատավորի գործառույթներ, միաժամանակ շարունակում էր իր ծառայությունը զինված ուժերում և պարտավոր էր ենթարկվել զինվորական կարգապահական կանոններին: Բացի այդ, նա խնդրո առարկա գործը քննող դատավորների կազմում նշանակվել էր իր վերադասների կողմից և չէր օգտվում այն նույն սահմանադրական երաշխիքներից, ինչ զինվորական գործերով քրեական դատարանի՝ գործը քննող կազմի մնացյալ երկու դատավորը: Այսպիսով զինվորական գործերով քրեական դատարանը, որը Դիմողին դատապարտել էր ազատազրկման, չէր կարող համարվել անխախտ և անկողմնակալ:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41 Արդարացի փոխհատուցում համարվեց խախտման փաստի ճանաչումը:

Հոդված 6 § 2

Անմեղության կանխավարկած
Անմեղության կանխավարկածի կիրառումը ոչ քրեական գործերով դատավարություններում. գործը ներկայացվել է Մեծ պալատի քննությանը

Allen v. the United Kingdom - 25424/09
[IV Բաժանմունք]

Դիմողը դատապարվել էր սպանության համար: Հինգ տարի անց վերաքննիչ դատարանը բեկանել է ստորադաս դատարանի դատավճիռը նոր ապացույցներ ի հայտ գալու հիմքով, որոնց առկայության դեպքում առաջին

դատավարության ժամանակ երդվյալ ատենակալները կարող էին գալ այլ եզրակացության: Այդուհանդերձ, հաշվի առնելով դատավճիռից հետո անցած ժամանակը և այն փաստը, որ Դիմողը կրել է իր պատիժը՝ նոր դատաքննություն չի նշանակվել: Դիմողը բողոք է ներկայացրել՝ պահանջելով փոխհատուցում դատական սխալի արդյունքում իրեն պատճառված վնասի համար: Դիմողի բողոքը հիմնված էր Եվրոպական միության առաջնային օրենսդրության վրա: Դիմողի բողոքը Պետական քարտուղարի որոշմամբ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Դիմողը չի հաստատել իր անմեղությունը և չի վկայակոչել դատաքննության ընթացքում թույլ տրված որևէ էական սխալ կամ թերացում, որը կարող է համարվել դատական սխալ: Պետական քարտուղարի սույն որոշումը հետագայում ուժի մեջ է թողնվել ներպետական դատարանների կողմից: Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված դիմումում Դիմողը պնդում էր, որ համաձայն Հոդված 6-ի §2-ի՝ իրեն փոխհատուցում տրամադրելու մերժումը չի համապատասխանում անմեղության կանխավարկածի սկզբունքին:

ՀՈԴՎԱԾ 7 Հոդված 7 § 1

Առավել ծանր պատիժ
Առավել ծանր պատժի ենթադրյալ հետադարձ կիրառումը պատերազմական հանցագործությունների նկատմամբ. գործը ներկայացվել է Մեծ պալատի քննությանը



(Maktouf v. Bosnia and Herzegovina - 2312/08

Damjanovic v. Bosnia and Herzegovina - 34179/08 [IV Բաժանմունք]

Դիմողները դատապարտվել են Բոսնիայի և Հերցեգովինայի՝ 2003թ. քրեական օրենսգրքով պատերազմական հանցագործությունների կատարման համար: Վերջիններս կատարվել են 1992 և 1993թթ. Բոսնիայում և Հերցեգովինայում պատերազմի ընթացքում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քննությանը ներկայացված դիմումներում Դիմողները բողոքում են, որ չի ապահովվել Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետության՝ 1976թ. Քրեական օրենսգրքով նախատեսված առավել մեղմ պատժի դատապարտվելու իրենց իրավունքը, ինչպես որ սահմանված է Կոնվենցիայի Հոդված 7-ում: Դիմողներից մեկը՝ պ-ն Մաքթաուֆը, գտնում է, որ չի պահպանվել Կոնվենցիայի Հոդված 6-ով նախատեսված իրավունքը, այն է՝ տրիբունալը, որի դատավճռով նա դատապարտվել է, անկախ չէր:

Դիմողի ազատման ժամկետի երկարաձգումը՝ նրա դատապարտումից հետո նախադեպային իրավունքում կատարված փոփոխության հետևանքով. խախտում

Del Rio Prada v. Spain - 42750/09
Վճիռ 10.7.2012 [Մաս III]

Փաստական հանգամանքներ: 1995 և 2000թթ. միջև ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած ութ դատավարության արդյունքում, տեռորիստական հարձակումների հետ կապված մի շարք հանցագործությունների կատարման համար Դիմողը դատապարտվել է տարբեր ժամկետներով ազատազրկման: Այդ ժամկետների հանրագումարը կազմել է ավելի քան 3000 տարի: 2000թ. նոյեմբերին *Audiencia Nacional*-ը, հաշվի առնելով կատարված հանցագործությունների միջև իրավական և ժամանակագրական կապը, միացրել է առանձին հանցագործությունների կատարման համար նշանակված պատիժները և ազատազրկման վերջնական ժամկետը սահմանել երեսուն տարի: Սույն ժամկետը համապատասխանում էր 1973թ.՝ այդ ժամանակ գործող քրեական օրենսգրքով նախատեսված ազատազրկման ժամկետի առավելագույն չափին: 2008թ. ապրիլին քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, որտեղ իր պատիժն էր կրում Դիմողը, վերջինիս ազատման ժամկետ է սահմանել 2008թ. հուլիսը: Ժամկետի կրճատումը պայմանավորված էր 1987թ. ի վեր քրեակատարողական հիմնարկում Դիմողի կատարած աշխատանքով: Մայիսին *Audiencia Nacional*-ը խնդրել է բանտի վարչակազմին վերանայել Դիմողի՝ նախապատրաստվող ազատման ժամկետը և իրականացնել այդ ժամկետի վերահաշվարկ՝ համաձայն նախադեպային նոր իրավունքի (այսպես կոչված «Պարոտի» դոկտրին), որն ամրագրված էր

Գերագույն դատարանի՝ 2006թ. փետրվարի որոշման մեջ: Նախադեպային այդ իրավունքի համաձայն՝ ազատագրկման ժամկետի կրճատման իրավունքը պետք է տարածվեր պատիժների համակցության մեջ մտնող յուրաքանչյուր պատժի վրա առանձին, այլ ոչ թե կիրառվեր ազատագրկման վերջնական՝ 30 տարվա ժամկետի նկատմամբ: Վերը նշված դոկտրինի պարագայում Դիմողի ազատագրկման վերջնաժամկետը սահմանվել է 2017թ. հունիսի 27-ը: Դիմողի կողմից սույն որոշման բողոքարկման փորձերը հաջողությամբ չեն պսակվել:

Իրավունք - Հոդված 7: Դիմողին հանցագործությունների կատարման մեջ մեղավոր ճանաչելը և յուրաքանչյուր հանցագործության համար ազատագրկման առանձին ժամկետի սահմանումը հիմնված էր խնդրո առարկա ժամանակահատվածում գործող քրեական օրենքի վրա: Կողմերի փաստարկները հիմնականում վերաբերում են պատիժների համակցության կիրառման արդյունքում պատժաչափերի հանրագումարի հաշվարկին՝ կապված պատժաչափի կրճատման կանոնների կիրառման հետ:

Ինչ վերաբերում է օրենքի և նախադեպային իրավունքի հասանելիությանը, 1973թ. քրեական օրենսգիրքը սահմանում էր 30 տարին՝ որպես ազատագրկման առավելագույն ժամկետ պատիժների համակցության դեպքում՝ առանց նախատեսելու պատժաչափի կրճատման հաշվարկի

որևէ առանձնահատուկ կանոն այն դեպքերում, եթե պատժաչափերի հանրագումարը էապես գերազանցում է ազատագրկման առավելագույն ժամկետը: Նախադեպային իրավունքը սահմանում էր քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից պատժաչափի նվազեցման հնարավորություն դատապարտյալի կողմից քրեակատարողական հիմնարկում որոշակի աշխատանքի կատարման դեպքում: Այս դեպքում որպես պատժաչափի նվազեցման համար հաշվարկի հիմք հանդիսանում էր 30 տարվա ազատագրկման վերջնական ժամկետը: Սույն կանոնի ուժով Դիմողը կարող էր արդարացիորեն հուսալ, որ իր ազատագրկման ժամկետը կկրճատվի՝ հաշվի առնելով 1987թ. ի վեր քրեակատարողական հիմնարկում իր կողմից կատարված աշխատանքը: Համապատասխանաբար այն ժամանակ, երբ Դիմողը կատարել էր հանցավոր արարքները, և երբ կայացվել է Դիմողի նկատմամբ նշանակված պատիժները միացնելու որոշում, Իսպանիայի օրենսդրությունը և նախադեպային իրավունքը հնարավորություն էին տալիս Դիմողին համապատասխան հանգամանքներում ողջամտության սահմաններում կանխատեսել նշանակված պատժի, դրա ժամկետի շրջանակը և պատժի կատարման ձևը: Երբ 2008թ. *Audiencia Nacional*-ը փոխեց Դիմողի ազատագրկման վերջնաժամկետը, նա հիմք է ընդունել նախադեպային նոր իրավունքը, որը 2006թ. իր որոշման մեջ սահմանեց Գերագույն դատարանը; Վերջինիս դատավճռի լայացվել էր

Դիմողի կողմից հանցավոր արարքներ կատարելուց և պատիժների համակցության մասին 2000թ. ընդունված որոշումից բավական ժամանակ անց՝ հետադարձ կերպով համարյա 9 տարով երկարացնելով ազատազրկման ժամկետը և ամբողջովին ուժը կորցրած ճանաչելով աշխատանքի կատարման համար պատժաչափի կրճատման ժամկետները: Պատժի ժամկետի հաշվարկման մեթոդաբանության մեջ կատարված փոփոխությունը բացասական որոշակի հետևանքներ է առաջացրել Դիմողի համար՝ կապված թե պատժի փաստացի կրման ժամկետի և թե պատժի շրջանակի հետ:

Ինչ վերաբերում է ներպետական դատարանների կողմից կատարված այդ մեկնաբանության կանխատեսելիությանը, ապա 2006թ. որոշումից առաջ այդ որոշմանը բովանդակային իմաստով առնչվող նմանատիպ դատական ակտ չկա, իսկ այդ դատավճռից առաջ առկա քրեակատարողական և դատական պրակտիկան ավելի բարենպաստ էր Դիմողի համար: Ավելին՝ Գերագույն դատարանի նախադեպային նոր իրավունքը իմաստագուրկ է դարձնում քրակատարողական հիմնարկում աշխատանքի կատարման համար պատժի կրճատման ժամկետները, որոնք հաշվարկված էին 1995թ. ընդունված նոր քրեական օրենսգրքի շրջանակներում: Վերջինս վերացրեց աշխատանքի համար պատժաչափի կրճատման համակարգը և համակցությամբ նշանակված, երակարատև պատիժներ կրող դատապարտյալների համար սահմանեց

խրախուսման միջոցների հաշվարկման առավել խիստ կանոններ: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ եթե Պայմանադիր պետություններն ազատ են բարեփոխելու քրեաիրավական ոլորտում իրենց քաղաքականությունը, ներպետական դատարանները չեն կարող իրականացնել հանցագործության կատարումից հետո ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների հետադարձ և համապատասխան անձանց դրությունը վատթարացնող կիրառում: Այսպիսով քննարկվող ժամանակահատվածում Դիմողի համար դժվար էր, եթե ոչ անհնարին կանխատեսել Գերագույն դատարանի նախադեպային իրավունքում տեղի ունենալիք փոփոխությունը և իմանալ, որ *Audiencia Nacional*-ը պատժի կրման ժամկետը կկրճատի՝ հիմնվելով համակցության մեջ մտնող պատիժներից յուրաքանչյուրի, այլ ոչ թե համակցության մեջ մտնող պատիժների գումարման արդյունքում ստացված պատժաչափի հանրագումարի վրա՝ նշանակալիորեն ավելացնելով Դիմողի ազատազրկման ժամկետը:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 5: Հաշվի առնելով Հոդված 7-ի խախտումը հիմնավորող փաստարկները՝ Դիմողը խնդրո առարկա ժամանակահատվածում չէր կարող տրամաբանության սահմաններում կանխատեսել, որ իր ազատազրկման փաստացի ժամկետը կերակարածգվի համարյա ինը տարով, և այդպիսով իմաստագրկվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի

որոշումը նախկին՝ 1973թ. քրեական օրենսգրքի շրջանակներում Դիմողի ազատագրկման ժամկետը կրճատելու մասին: Համապատասխանաբար, սկսած այն ժամկետից, երբ Դիմողը պետք է ազատ արձակվեր՝ համաձայն նախքան 2006թ. փոփոխությունները գործող նախադեպային իրավունքի, Դիմողի ազատագրկումն <<իրավա-չափ>> չէր:

Եզրակացություն՝ խախտում(միաձայն):

Հոդված 46 – Հաշվի առնելով գործի առանձնահատուկ հանգամանքները և Հոդված 7-ի ու Հոդված 5-ի § 1-ի խախտումը վերացնելու անհետաձգելի անհրաժեշտությունը՝ Դատարանը գտնում է, որ Իսպանիայի պետությունը պետք է ապահովի բանտից Դիմողի ազատումը հնարավոր ամենավաղ ժամկետում:

Հոդված 41- 30000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

ՀՈԴՎԱԾ 8

Արտաքսում

Երկարաժամկետ Դիմողի արտաքսումը մի շարք հանցագործությունների կատարման համար մի քանի անգամ դատապարվելուց հետո - խախտումը բացակայում է:

Samsonnikov v. Estonia - 52178/10
Վճիռ 3.7.2012 [Մաս I]

Փաստական հանգամանքներ: Դիմողը ծնվել է 1978թ. Էստոնիայում և մինչև իր վտարումը 2011թ.-ին ապրել այնտեղ՝

ժամանակավոր կացության թույլտվության հիման վրա: Նա երբևէ Էստոնիայի իշխանությանը պաշտոնապես չի դիմել Էստոնիայի քաղաքացիություն ստանալու նպատակով: 1998թ. Տալլինում ռուսալեզու դպրոց ավարտելուց հետո Դիմողն ստացել է Ռուսաստանի քաղաքացիություն: Դիմողի հայրը և եղբայրը իրենց ընտանիքներով նույնպես ապրում էին Էստոնիայում: 1997թ. սկսած՝ Դիմողը մի քանի անգամ դատապարտվել է լուրջ հանցագործությունների կատարման համար, որոնց մի մասը կապված էր բռնության և (կամ) թմրադեղերի հետ: Դիմողը մեղավոր է ճանաչվել նաև մի շարք ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար: 2008թ. Շվեդիայում Դիմողը դատապարտվել է ծանրացուցիչ հանգամանքներում կատարված թմրադեղերի մաքսանենգության համար: Բանտից ազատ արձակվելուց հետո Դիմողը Շվեդիայից արտաքսվել է Էստոնիա, որի իրավասու պետական մարմինները մինչ այդ արդեն մերժել էին երկարաձգել Դիմողի ժամանակավոր կացության թույլտվությունը՝ հաշվի առնելով Դիմողի կատարած հանցագործությունների բնույթը և ծանրությունը: Դիմողն արտաքսվել է Ռուսաստան 2011թ.՝ Էստոնիա մուտք գործելու 3-ամյա արգելքով:

Իրավունք: Հոդված 8 - Անկասկած է, որ Դիմողի վտարումը Էստոնիայից առնչվում է նրա մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին: Ինչ վերաբերում է Դիմողի ընտանեկան կյանքին, նրա հարաբերությունները հոր կամ եղբոր հետ դուրս չէին գալիս



ընտանիքի չափահաս անդամների միջև սովորական կապերի շրջանակից: Չնայած Դիմողն Էստոնիայում ուներ զուգընկերուհի, նրանք սկսել էին ապրել համատեղ Շվեդիայից Դիմողի արտաքսումից հետո: Այսպիսով Դիմողի հայրը, եղբայրը և զուգընկերուհին պետք է տեղյակ լինեին Դիմողի կացության անկայուն կարգավիճակի մասին: Դիմողը երբեք Էստոնիայի կառավարությունից քաղաքացիություն չի հայցել, փոխարենը ստացել է Ռուսաստանի քաղաքացիություն՝ այդպիսով բացահայտորեն ցույց տալով իր կապն այդ պետության հետ: Նրա սոցիալական շրջանակը (այդ թվում հարազատները և զուգընկերուհին) հիմնականում ընդգրկում էր ռուսական ծագումով անձանց: Դիմողն ուներ նաև Ռուսաստանում բնակվող ընտանիք: Այս բոլոր գործոնները ցույց էին տալիս, որ Դիմողն անհաղթահարելի դժվարությունների չէր հանդիպի Ռուսաստանում բնակություն հաստատելու դեպքում: Էստոնիայի իշխանությունը մերժել է երկարաձգել Դիմողի կացության թույլտվության ժամկետը ոչ միայն Շվեդիայում Դիմողի դատապարտման հետևանքով, այլ նաև բոլոր հանգամանքների գնահատման արդյունքում, այդ թվում այնպիսի հանգամանքների, ինչպիսիք են՝ Էստոնիայում Դիմողի դատվածությունների ցանկը, որի համաձայն՝ նախորդող 12 տարվա ընթացքում Դիմողը դատապարտվել է ընդհանուր 8 տարվա ազատազրկման: Հաշվի առնելով Դիմողի տարիքը, իրավախախտ վարքագծի տևողությունը և նրա կատարած հանցագործությունների լրջությունը՝

Դիմողի վարքագիծը չէր կարող համարվել լոկ <<երիտասարդական զանցանք>>: Դատարանը նշել է, որ Եվրոպայի [խորհրդի նախարարների կոմիտեի](#) (2000)15 [ուղեցույց](#)⁴ հնարավորություն է տալիս Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին իրենց ներքին օրենսդրությամբ սահմանել, որ տվյալ պետությունում երկարատև ժամանակ բնակվող էմիգրանտը կարող է արտաքսվել, եթե այդ անձը լուրջ վտանգ է ներկայացնում ազգային անվտանգության կամ հանրային ապահովության համար: Եվրոպական դատարանն ընդգծում է, որ Էստոնիա մուտք գործելու 3-ամյա արգելքը չի հանդիսանում Դիմողի՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների անհամաչափ սահմանափակում:

Եզրակացություն՝ խախտումը բացակայում է (հինգ ձայն ընդդեմ երկուսի)

(Տես նաև [Mutlag v. Germany](#), no. 40601/05, 25 March 2010, [Information Note no. 128](#); և [Maslov v. Austria](#) [GC], no. 1638/03, 23 June 2008, [Information Note no. 109](#))

Մասնավոր կյանքի հարգանքի իրավունք

Թերապևտիկ դեղորայքի հարկադրական ընդունում հոգեբուժական հաստատությունում: խախտում

⁴ Նախարարների կոմիտեի (2000)15 ուղեցույցը երկարաժամկետ միգրանտների անվտանգության վերաբերյալ, ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 13-ին:

X v. Finland - 34806/04
 Վճիռ 3.7.2012 [IV Բաժանմունք]

Փաստական հանգամանքներ

Դիմողը մանկաբույժ էր, ով ձերբակալվել է 2004թ. հոկտեմբերին իր դեմ հարուցված քրեական գործի շրջանակներում; Դիմողը կասկածվում էր նրանում, որ օգնել է մի երեխայի մոր այդ երեխային առանց հիվանդանոցային խնամքի թողնելու հարցում: Դատարանի որոշմամբ Դիմողը տեղափոխվել է հոգեբուժական հաստատություն, որտեղ բժշկը երկամսյա հետազոտությունից հետո Դիմողի մոտ հայտնաբերել է զառանցագին խանգարում: Բժշկի եզրակացության համաձայն՝ Դիմողը համապատասխանում էր հոգեբուժական հաստատությունում մեկուսացման համար սահմանված չափանիշներին: 2005թ. փետրվարին Բժշկական և իրավական հարցերով ազգային մարմնի դատական հոգեբուժության խորհուրդը բժշկի զեկույցի հիման վրա որոշում է կայացրել Դիմողին հարկադիր բուժման ենթարկելու մասին: Հիվանդանոցում այն դեղերը, որոնք Դիմողը մերժում էր խմել, նրան ներարկում էին: Դիմողը հիվանդանոցից դուրս է գրվել 2006թ. հունվարին, իսկ նրա հարկադիր բուժումը պաշտոնապես ավարտվել է նույն տարվա հունիսին: Դիմողը ներպետական ատյաններում վիճարկել է իր մեկուսացման և հարկադիր բուժման իրավաչափությունը, բայց հաջողության չի հասել:

Իրավունք Հոդված 5, §. 1

Դիմողին հարկադիր հիվանդանոցային բուժման ենթարկելու սկզբնական որոշումը կայացվել էր անկախ վարչական մարմնի կողմից, որն ուներ իրավական և բժշկական գիտելիքներ: Վերը նշված որոշումը հիմնված էր մանրակրկիտ հոգեբուժական հետազոտության վրա, որն իրականացվել էր հոգեբուժական հաստատությունում մի բժշկի կողմից, ով չէր մասնակցել Դիմողին հարկադիր բուժման ենթարկելու որոշման կայացմանը: Որոշման կայացման գործընթացը բոլոր փուլերի ընթացքում համապատասխանում էր ներպետական իրավական ընթացակարգերին: Հոգեկան առողջության մասին ակտը իրավական ընթացակարգերի սահմանման իմաստով բավարար չափով հստակ էր և կանխատեսելի: Այդուհանդերձ ներպետական օրենսդրությունը պետք է նաև պաշտպանի անհատներին նրանց ազատության և անվտանգության կամայական զրկումից: Եթե Դիմողի սկզբնական մեկուսացման առումով որևէ խնդիր չկար, քանզի առկա էր մեկուսացումը թույլատրող որոշում, որը կայացվել էր անկախ, մասնագիտացված մարմնի կողմից, հիմնված էր համապատասխան հոգեբուժական հետազոտության վրա և կարող էր բողոքարկվել դատարան, ապա սահմանված ժամկետը լրանալուց հետո Դիմողի հարկադիր մեկուսացման պահպանման իմաստով կամայական գործողությունների կանխմանն ուղղված երաշխիքներն ադեկվատ չէին: Մասնավորապես բացակայում էր անկախ հոգեբուժական

Եզրակացությունը, քանզի այն երկու բժիշկները, որոնք որոշում են ընդունել երակարածգել մեկուսացման ժամկետը, աշխատում էին նույն հիվանդանոցում, որտեղ պահվում էր Դիմողը: Ի լրումն վերոշարադրյալի՝ հարկ է նշել, որ Ֆինլանդիայի օրենսդրության համաձայն՝ Դիմողն իրավունք չունի անձամբ բողոքարկել իր մեկուսացման երկարածգման որոշումը, քանզի այդ որոշումը կարող էր վերանայվել ներպետական իրավասու մարմինների նախաձեռնությամբ 6 ամիսը մեկ իրականացվող ստուգումների ընթացքում: Այսպիսով ներպետական օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգը չէր ապահովել բավարար երաշխիքներ կամայական որոշումներն ու գործողությունները կանխելու համար:

Եզրակացություն – խախտում միաձայն):

Հոդված 8: Անհատի կամքին հակառակ բժշկական միջամտությունը որպես կանոն հանդիսանում է ներխուժում մարդու անձնական կյանք և մասնավորապես նրա անձնական ամբողջականության ոլորտ: Այդպիսի ներխուժումը կարող է համարվել արդարացի, եթե այն իրականացվել է օրենքին համապատասխան, հետապնդել է իրավաչափ նպատակ և եղել է համաչափ: Խնդրո առարկա գործում օրենքի հասանելիության և կանխատեսելիության իմաստով որևէ խնդիր չկա: Այդուհանդերձ Հոդված 8-ը պահանջում է նաև, որպեսզի օրենքը համապատասխանի իրավունքի գերակայության սկզբունքին, որը հարկադիր բուժման սույն

առանձնահատուկ ոլորտում նշանակում էր, որ ներպետական օրենսդրությունն անհատի համար պետք է ապահովի որոշակի պաշտպանություն կամայական գործողություններից: Հոգեկան առողջության ակտի համաձայն՝ հիվանդին այցելող բժիշկները կարող էին որոշել հիվանդի բուժումը՝ անկախ նրա ցանկություններից, և բժիշկների որոշումները չէին կարող բողոքարկվել: Այդուհանդերձ հաշվի առնելով դեղորայքի հարկադիր ընդունման խնդրի լրջությունը՝ Եվրոպական դատարանը որոշել է, որ օրենքը, որի վրա հիմնված էր հարկադիր բուժումը, պետք է սահմաներ պատշաճ երաշխիքներ ընդդեմ կամայականության: Դիմողի գործում այդպիսի երաշխիքները բացակայում էին. դիմողին հարկադիր մեկուսացնելու մասին որոշումը միաժամանակ ընդգրկում էր դեղորայքի հարկադիր ընդունում, եթե հիվանդը մերժում էր բուժումը, որոշումների ընդունման իրավասությունը ամբողջովին պատկանում էր բուժող բժիշկներին, և դա դատական որևէ քննության ենթակա չէր: Դիմողը զրկված էր պաշտպանության որևէ միջոցից, որով նա կարող էր դիմել դատարան հարկադիր բուժման և (կամ) դեղորայքի հարկադիր ընդունման իրավաչափությունը կամ համաչափությունը վիճարկելու կամ այդ գործողությունները (որոշումները) դադարեցնելու նպատակով: Համապատասխանաբար մասնավոր կյանքի իրավունքի նման սահմանափակումը չէր հանդիսանում օրենքին համապատասխան:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41 – 10000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

(Տես նաև *Herczegfalvy v. Austria*, թիվ 10533/83, 24 սեպտեմբեր, 1992թ.)

Անձը, ում կինը Շվեցարիայում ինքնասպան է եղել Գերմանիայում կյանքի համար վտանգ ներկայացնող դեղամիջոցի ձեռքբերման համար թույլտվություն չստանալուց հետո, դիմում է ներակայացրել Գերմանիայի դատարան: Գերմանիայի դատարանները մերժել են դիմումը վարույթ ընդունել: խախտում

Koch v. Germany - 497/09
Վճիռ 19.7.2012 [V Բաժանմունք]

Փաստական հանգամանքներ: 2004թ. Դիմողի կինը, ով տառապում էր 4 վերջույթի կաթվածով, դիմեց Ֆարմացևտիկ և բժշկական ապրանքների դաշնային ինստիտուտ՝ համապատասխան դեղամիջոցի մահացու չափաբաժնի ձեռքբերման թույլտվություն ստանալու նապատակով, ինչը հնարավորություն կտար կնոջը Գերմանիայում, տանը ինքնասպանություն գործել: Ինստիտուտը մերժեց Դիմողի կնոջը: Դիմողի և իր կնոջ կողմից Ինստիտուտի որոշման՝ վարչական կարգով բողոքարկումը նույնպես մերժվեց: 2005թ. փետրվարին ամուսինները մեկնեցին Շվեցարիա, որտեղ Դիմողի կինը մի

հասարակական կազմակերպության օգնությամբ ինքնասպանություն գործեց: 2005թ. ապրիլին Դիմողը բողոք ներկայացրեց՝ վիճարկելով Ինստիտուտի որոշման իրավաչափությունը, սակայն նրա բողոքը մերժվեց: Դիմողն այդ մերժումը բողոքարկեց վարչական դատարան, վարչական վերաքննիչ դատարան և Դաշնային սահմանադրական դատարան, սակայն Դիմողի բողոքները վերը նշված ատյաններից և ոչ մեկում վարույթ չընդունվեցին:

Իրավունք: Հոդված 8

(ա) *Դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը:* Սույն գործը պետք է տարբերել այն գործերից, որոնք ներկայացվում են Եվրոպական դատարանի քննությանը հանգուցյալի ժառանգի կամ հարազատի կողմից և միմիայն հանգուցյալի անունից, քանի որ Դիմողը սույն դիմումով հայցում էր իր սեփական իրավունքների պաշտպանությունը: Չնայած այդ տարբերությանը՝ այն պայմանները, որոնց առկայության դեպքում ժառանգը կամ հարազատը իրավունք էր ձեռք բերում հայց կամ դիմում ներկայացնել հանգուցյալի անունից, այս դեպքում նույնպես կիրառելի էին: Դիմողն ու իր կինն ամուսնացած էին արդեն 25 տարի և շատ մետերիմ էին: Դիմողն անբաժան էր իր կնոջից վերջինիս հիվանդության ողջ ընթացքում՝ ի վերջո ընդունելով և աջակցելով կնոջ ցանկությանը վերջ տալ իր կյանքին: Դիմողը կնոջ հետ մեկնեց Շվեցարիա կնոջ ցանկությունն իրագործելու համար: Դիմողն իր կնոջ հետ համատեղ վարչական բողոք

ներկայացրեց և կնոջ մահից հետո իր անունից շարունակեց դատական գործի վարումը: Վերոշարադրյալ բացառիկ հանգամանքները ցույց էին տալիս, որ Դիմողն ուներ նշանակալից և շարունակական շահ, որպեսզի դատարանները քննեն իր բողոքը: Ավելին՝ գործը վերաբերում էր առանցքային հիմնահարցի, որն առնչվում էր հիվանդի՝ իր կյանքին վերջ տալու վերաբերյալ որոշման ընդունման հնարավորությանը: Նման հարցերը բխում են հանրության ընդհանուր շահերից և դուրս են գալիս Դիմողի և իր հանգուցյալ կնոջ մասնավոր դեպքի և նրանց անձնական շահերի շրջանակից: Մասնավորապես, հաշվի առնելով Դիմողի և իր կնոջ բացառիկ մտերիմ հարաբերությունները և այն փաստը, որ Դիմողն անմիջապես սկսեց զբաղվել կնոջ՝ իր կյանքին վերջ տալու ցանկության իրագործման հարցով, Դիմողը կարող էր պնդել, որ Ինստիտուտի կողմից կայացված որոշումը կնոջ դիմումը մերժելու մասին ուղղակիորեն շոշափում է իր շահերը: Համապատասխանաբար տեղի է ունեցել միջամտություն Դիմողի մասնավոր կյանքի հարգանքի իրավունքին այն հիմքով, որ Դաշնային ինստիտուտը որոշում է ընդունել իր կնոջ դիմումը մերժելու մասին, և վարչական դատարանները մերժել են ըստ էության քննել Դիմողի ներկայացրած բողոքը: Ինչ վերաբերում է Հոդված 8-ի ընթացակարգային մասին և մասնավորապես այն հարցին, թե արդյոք Դիմողի անձնական իրավունքները բավարար չափով ապահովվել են ներպետական ընթացակարգերում, վարչական

դատարանը և վարչական վերաքննիչ դատարանը մերժել են քննության առնել Դիմողի ներկայացրած բողոքը այն հիմնավորմամբ, որ դատական քննության ներկայացված գործով չի խախտվել Դիմողի՝ ներպետական օրենսդրությամբ կամ Հոդված 8-ով նախատեսված որևէ իրավունք, որի պաշտպանության համար Դիմողը կարող էր դիմել դատարան, և Դիմողը չունի *locus standi* իր հանգուցյալ կնոջ դատական գործը նրա մահից հետո վարելու համար: Ընդ որում, եթե վարչական դատարանը որոշում կայացրեց, որ Դաշնային ինստիտուտի կողմից Դիմողի կնոջ դիմումի մերժումը եղել է իրավաչափ և համապատասխանել է Հոդված 8-ի պահանջներին, ապա վարչական վերաքննիչ դատարանը և Դաշնային սահմանադրական դատարանն ընդհանրապես մերժել են Դիմողի բողոքն ընդունել վարույթ: Վերը նշված դատական ատյանների մերժումը բողոքը վարույթ ընդունել չէր հետապնդում որևէ իրավաչափ նպատակ: Ահա այստեղ է, որ խախտվել էր Դիմողի իրավունքը, որպեսզի իր բողոքն ըստ էության քննվի ներպետական դատարանների կողմից:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև սուբսիդիարության սկզբունքը և այդպիսի հարցերում Պետություններին տրված գնահատողական և որոշման կայացման նշանակալից լիազորությունները՝ բժիշկների կողմից դեղորայքի մահացու չափաբաժնի նշանակման հնարավորության կապակցությամբ կոնսենսուսի բացակայության պայմաններում՝ անհրաժեշտություն չկար հետազոտելու Դիմողի բողոքի նյութաիրավական մասը:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

(բ) *Դիմողի կնոջ իրավունքների ենթադրյալ խախտումը:* Դատարանը վերահաստատեց իր դիրքորոշումն առ այն, որ Հոդված 8-ով նախատեսված իրավունքներն իրենց բնույթով անօտարելի են, և այդպիսով այդ իրավունքների իրացումն ու պաշտպանությունը չի կարող իրականացվել իրավատիրոջ մերձավոր հարազատի կամ այլ իրավահաջորդի կողմից: Հետևաբար սույն գործի շրջանակներում հանգուցյալի ամուսինը չէր հանդիսանում պատշաճ դիմող՝ իր հանգուցյալ կնոջ իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու մասով: Սույն պատճառով կնոջ իրավունքների պաշտպանության մասով դիմումի ըստ էության քննությունը մերժվել է, քանզի այն չէր համապատասխանում Կոնվենցիայով նախատեսված *ratione materiae* սկզբունքին:

Եզրակացություն՝ դիմումը սույն մասով վարույթ ընդունելը մերժվել է (միաձայն):

Հոդված 41: 2.500 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

(Տես նաև *Haas v. Switzerland*, թիվ. 31322/07, 20 հունվարի, 2011թ. [Նախադեպային տեղեկատու No. 137](#))

Իր դեմ հարուցված քրեական գործի շրջանակներում պետական պաշտոնատար անձի պաշտոնեական

լիազորությունների կասեցումը՝ զուգորդված վերջինիս կողմից որևէ վճարովի աշխատանք կատարելու արգելքով՝ քրեական գործի՝ 6 տարի տևած քննության ընթացքում. խախտում

D.M.T. and D.K.I. v. Bulgaria - 29476/06
Վճիռ 24.7.2012 [IV Բաժանմունք]

Փաստական հանգամանքներ: Առաջին Դիմողն զբաղեցնում էր Ներքին գործերի նախարարության Տնտեսական հանցագործությունների վարչության պետի պաշտոնը: 1999թ. առաջին Դիմողի դեմ հարուցվել է քրեական գործ, և նրա պաշտոնեական լիազորությունները կասեցվել են: Բացի այդ, առաջին Դիմողի վրա շարունակվեց տարածվել Նախարարության պաշտոնատար անձանց նկատմամբ գործող արգելք՝ կապված ցանկացած այլ վճարովի աշխատանք կատարելու հետ: Առաջին Դիմողը խնդրել է , որ իրեն ազատեն աշխատանքից, որպեսզի ինքը կարողանա ստանալ կենսաթոշակային հատուցումները, բայց Դիմողի խնդրանքը մերժվել է: 1999-2002թթ. միջև ընկած ժամանակահատվածում առաջին Դիմողը մի քանի անգամ դիմել է դատարան՝ պահանջելով չեղյալ հայտարարել իր պաշտոնեական լիազորությունների կասեցման որոշումը և իրեն վերականգնել զբաղեցրած պաշտոնում: Դատարանը մերժել է Դիմողի բոլոր պահանջները: 2005թ.՝ Դիմողի՝ հարուցված քրեական գործի շրջանակներում մեղավոր ճանաչվելուց և դատապարտվելուց հետո ներքին

գործերի նախարարը Դիմողին պաշտոնանկ է արել:

Իրավունք: Հոդված 8 - Դիմողը ոչ միայն բողոքում է, որ նրա՝ որպես քաղաքացիական ծառայողի պաշտոնավարությունը կասեցվել էր, այլ նաև, որ այդ կասեցումն ուղեկցվել էր հանրային կամ մասնավոր ոլորտում որևէ այլ վճարովի աշխատանք կատարելու արգելքով: Բացառություն էր կազմում մանկավարժական և հետազոտական աշխատանքը, որի կատարումը թույլատրված էր: Սույն արգելքը գործում էր մինչև 6 տարի անց Դիմողին իր պաշտոնից ազատելը: Այդ կացությունը երկար ժամանակով խոչընդոտում էր Դիմողին զարգացնելու մասնագիտական հարաբերություններն արտաքին աշխարհի հետ և արդյունքում ներխուժում էր Դիմողի մասնավոր կյանքի ոլորտ: Սույն ներխուժումը համապատասխանում էր օրենքին և հետապնդում էր հակաօրինականությունն ու հանցավորությունը կանխելու իրավաչափ նպատակ: Այդուհանդերձ 2 ու կես տարի քրեական գործի քննության ձգձգումը, ինչը նախաքնության մամինների և դատարանների գործունեության մեջ առկա թերությունների արդյունք էր, ինքնաբերաբար երկարաձգել է Դիմողի պաշտոնեական լիազորությունների կասեցման ժամանակահատվածը, և դրա հետ կապված շարունակվել է նաև Դիմողի՝ մասնավոր ոլորտում աշխատանք գտնելու հնարավորության սահմանափակումը: Եթե բնականոն հանգամանքներում նման սահմանափակումը կարող էր արդարացվել քաղաքացիական ծառա-

յության ոլորտում շահերի բախման կանխման անհրաժեշտությամբ, ապա Դիմողի առանձնահատուկ դեպքում սույն ընդհանուր արգելքի կիրառումը անհամաչափորեն սահմանափակում էր Դիմողի իրավունքները: Ավելին՝ իրավասու պետական մարմինները համոզիչ բացատրություն չեն ներկայացրել առ այն, թե ինչու են մերժել Դիմողի խնդրանքը իրեն աշխատանքից ազատելու մասին, ինչի արդյունքում Դիմողը հնարավորություն կունենար փնտրելու այլ աշխատանք: Պարզ չէր, թե ինչպես կարող էր Դիմողին նման հնարավորության տրամադրումը խոչընդոտել քրեական գործի քննությանը: Հետևաբար Դիմողի իրավունքների վերը նշված սահմանափակումները արդար հարաբերակցություն չեն ստեղծում մի կողմից Դիմողի, իսկ մյուս կողմից հասարակության շահերի միջև, ինչպես նաև չի ներկայացվել բավարար հիմնավորում Դիմողի մասնավոր կյանքին միջամտելու համար:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն)

Դատարանը նաև գտնում է, որ խախտվել են Հոդված 6-ի § 1-ը՝ Հոդված 6-ի §. 3-ի հետ համակցության մեջ, Հոդված 13-ը՝ Հոդված 6-ի § 1-ի և Հոդված 8-ի հետ համակցության մեջ:

Հոդված 41 - 5.800 եվրո առաջին Դիմողին որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

(Տես նաև *Karov v. Bulgaria*, թիվ 45964/99, 16 նոյեմբերի, 2006թ.)

խոչընդոտել քրեական գործի քննությանը: Հետևաբար դիմումատուի վերը նշված սահմանափակող միջոցները արդար հավասարակշռություն չէին գտել դիմումատուի և հասարակության շահերի միջև, ինչպես նաև չի ներկայացվել բավարար հիմնավորում դիմումատուի դիմումատու անձնական կյանքին միջամտելու համար:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն)

Դատարանը նաև գտնում է, որ խախտվել են հոդված 6-ի պար. 1-ը՝ հոդված 6-ի պար. 3 (ա) և (բ)-ի հետ համակցությամբ, հոդված 6-ի պար. 1-ը և հոդված 13-ը՝ հոդված 6-ի պար. 1-ի և հոդված 8-ի հետ համակցությամբ:

Հոդված 41 - 5.800 եվրո առաջին դիմումատուին դիմումատու որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

(Տես նաև *Karov v. Bulgaria*, թիվ 45964/99, 16 նոյեմբերի, 2006թ.)

Հարգանք ընտանեկան կյանքի նկատմամբ

Երեխայի հարկադիր վերադարձն ենթադրյալ չարաշահող հոր մոտ հյուրընկալող երկրից, որին երեխան բարեհաջող ինտեգրվել էր. հարկադիր վերադարձը կհանդիսանա խախտում

B. v. Belgium - 4320/11
Վճիռ 10.7.2012 [II Բաժանմունք]

Փաստեր: 2003թ. առաջին դիմումատուն ԱՄՆ-ում ունեցել է դուստր, որը հանդիսանում է սույն գործով երկրորդ դիմումատուն: Դստեր հայրն ամերիկացի էր: Կյանքի առաջին չորս տարին երեխան ապրել է մոր հետ: 2004թ. առաջին դիմումատուն խնդրել է երեխայի հորը հրաժարվել երեխայի խնամակալության բոլոր իրավունքներից: Հայրն այդ խնդրանքը մերժել է: 2006թ. առաջին դիմումատուն դատապարվել է սոցիալական ապահովության ոլորտում կատարած խարդախության համար: Դրան հաջորդել է երկարատև դատական վեճ երեխայի խնամակալության համար, որի ընթացքում մայրը պնդում էր, որ եթե երեխան մնա հոր խնամակալության տակ, ապա հնարավոր է՝ հոր կողմից ենթարկվի բռնության: 2008թ. հոկտեմբերին առաջին դիմումատուն երեխայի հետ, առանց հորից կամ դատարաններից թույլտվություն ստանալու, լքել է ԱՄՆ-ը և բնակություն հաստատել Բելգիայում: 2008թ. դեկտեմբերին ԱՄՆ-ի դատարանը, գտնելով, որ երեխան առաջին դիմումատուի կողմից առևանգվել է, երեխայի խնամակալության իրավունքը տվել է միայն երեխայի հորը: 2009թ. հունվարին երեխայի միջազգային առևանգման հարցերով Ամերիկայի կենտրոնական մարմինը դիմել է այդ հարցերով զբաղվող Բելգիայի կենտրոնական մարմնին՝ խնդրելով հարկադիր կարգով ապահովել երեխայի վերադարձը ԱՄՆ՝ ի կատարումն Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական հայեցակետերի մասին [Հաագայի կոնվենցիայի](#): Միաժամանակ առաջին դիմումատուն

հայց է ներկայացրել դատարան երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների և միակ խնամակալության իրավունքների ձեռքբերման նպատակով: Քանի որ մայրը հրաժարվել էր երեխային հետ տանել ԱՄՆ, Բելգիայի կենտրոնական մարմինը, հանդես գալով երեխայի հոր անունից, գործը ներկայացրել է առաջին ատյանի դատարան, որը 2010թ. մարտին որոշել է, որ Հաագայի կոնվենցիայի շրջանակներում երեխայի վերադարձը չէր կարող արդարացվել: Բելգիայի կենտրոնական մարմինը առաջին ատյանի դատարանի որոշումը գանգատարկել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի որոշումը և կարգադրել առաջին դիմումատուին իր դստերը վերադարձնել ԱՄՆ: Առաջին դիմումատուն վերաքննիչ դատարանի որոշումը գանգատարկել է վճռաբեկ դատարան: 2011թ. փետրվարին, առաջին դիմումատուի պահանջով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշում է կայացրել Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնը կիրառելու մասին՝ նախքան վճռաբեկ դատարանում գործի վարույթի ավարտը և հետևաբար մինչև գործի քննության սկիզբը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

Իրավունք: Հոդված 8 - Բելգիայի դատարանների երեխային վերադարձնելու մասին կարգադրությունը հանդիսանում է միջամտություն, որի իրավական հիմքը Հաագայի կոնվենցիան է: Երեխայի միջազգային առևանգման ոլորտում հոդված 8-ով

պետությունների վրա դրված պարտավորությունները պետք է մեկնաբանվեն՝ մասնավորապես այդ կոնվենցիայի պահանջների լույսի ներքո: Սույն գործով ազգային դատարանները կայացրել են միմյանցից տարբերվող որոշումներ: Ավելին, երեխայի հոգեբանական հետազոտության վերաբերյալ ներկայացված զեկույցները ցույց են տվել, որ մորից բաժանվելը չէր բխում երեխայի շահերից, և նրա վերադարձն ԱՄՆ վտանգ էր ներկայացնում աղջկա համար: Վերաքննիչ դատարանն իրավունք ուներ լիակատար վստահություն չընծայել կողմերից մեկի ներկայացրած հոգաբանական հետազոտության մասին զեկույցներին: Այդուհանդերձ վերաքննիչ դատարանը չէր փորձել նշանակել այլ փորձաքնություն, ինչպես որ առաջարկվում էր Պետական իրավախորհրդատուի գրասենյակի կողմից: Նման փորձաքնության արդյունքում հնարավոր կլիներ որոշել, թե որքանով է հավանական, որ երեխան կհայտնվեր անհանդուրժելի դրության մեջ: Վերաքննիչ դատարանը նաև իր որոշումը չի հիմնավորել այն փաստարկով, որ երեխայի մոր՝ դստերն ԱՄՆ վերադարձնելու մերժումը հիմնավորող օբյեկտիվ հանգամանքների բացակայության պայմաններում, նա կարող էր ողջամտորեն ակնկալել երեխայի հետ ԱՄՆ վերադառնալ: Վերաքննիչ դատարանը, ի հավելումն վերը նշված և իր կողմից հաշվի չառնված հանգամանքների, հնարավոր չի համարել, որ մայրը կարող էր ուղեկցել երեխային ԱՄՆ՝ այդ պետությունում իր կացության կամ երեխային այցելելու

իրավունքները հաստատելու համար: Փոխարենը դատարանը միայն գտել է որ անհավանական է, որ մայրը վերադառնար ԱՄՆ, որտեղ նա դատապարտվել էր և զրկվել ծնողական իրավունքներից: Բացի այդ, երեխան, որն ուներ կրկնակի քաղաքացիություն, 5 տարեկան հասակում տեղափոխվել էր Բելգիա և այդ ժամանակվանից ի վեր առանց ընդհատումների ապրում էր այդ պետությունում: Աղջիկը խոսում էր հոլանդերեն և լիովին մերվել էր այդ երկրի և մասնավորապես դպրոցական միջավայրին: Մինչդեռ վերաքննիչ դատարանը «ժամանակի» գործոնը հաշվի է առել միայն ընթացակարգային տեսանկյունից: Հարկ է նշել, որ «ժամանակի» գործոնն ինքնին վճռական հանգամանք է, որին պետք է պատշաճ անդրադարձ կատարվեր՝ երեխայի՝ ԱՄՆ վերադառնալու հնարավորության կապակցությամբ սպառնալից եզրակացության հանգելու համար: Այդպիսով վերաքննիչ դատարանը իրավասու չէր իրազեկ ձևով որոշել՝ արդյոք Հաագայի կոնվենցիայի իմաստով ռիսկն առկա է եղել, թե ոչ: Հետևաբար ներպետական ատյաններում որոշման կայացման գործընթացը չէր համապատասխանում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 8-ի դատավարական պահանջներին: Երեխայի հարկադիր վերադարձն ԱՄՆ չէր կարող անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում:

Եզրակացություն՝ հարկադիր վերադարձը կհանդիսանա խախտում (հինգ ձայն ընդդեմ երկուսի)

Հոդված 41: Երկրորդ դիմումատուին 5000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, առաջին դիմումատուի՝ ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

(Տես նաև *Neulinger and Shrunck v. Switzerland* [GC], թիվ. 41615/07, 6 Հուլիս, 2010, [Նախադեպային տեղեկատու No. 132](#); և *Sneersone and Campanella v. Italy*, թիվ 14737/09, 12 հուլիսի 2011 [Նախադեպային տեղեկատու No. 143](#))

Ծնողական իրավունքներից ինքնաբերաբար և մշտական զրկում՝ որպես հետևանք երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի համար քրեական պատժի դատապարտվելու. խախտում

M.D. and Others v. Malta - 64791/10
Վճիռ 17.7.2012 [IV Բաժանմունք]

Փաստեր: Առաջին դիմումատուն 2 փոքրահասակ երեխաների մայր է, որոնք հանդիսանում են երկրորդ և երրորդ դիմումատուները: Սոցիալական ծառայությունների կողմից սույն ընտանիքի նկատմամբ քննություն է սկսվել, և 2005թ. իրավասու մարմինն ընդունել է երեխաների խնամակալության որոշում ու երեխաներին տեղավորել համապատասխան հիմնարկ: Առաջին դիմումատուն այդ որոշումը գանգատարկել է անչափահասների գործերով դատարան, որն այն թողել է ուժի մեջ: Զուգահեռաբար քրեական գործ է հարուցվել առաջին

դիմումատուի և իր զուգընկերոջ դեմ, և երկուսն էլ դատապարտվել են երեխայի հետ դաժան վարվելու ու երեխայի նկատմամբ հանցավոր անփութության համար: Դրանից հետո զույգը բաժանվել է, և առաջին դիմումատուին նախ հնարավորություն է տրվել հսկողության ներքո շփվել երեխաների հետ, իսկ որոշ ժամանակ անց առաջին դիմումատուն իրավունք է ստացել երեխաների հետ անցկացնել ոչ աշխատանքային և տոնական օրերը: Այդուհանդերձ իր դատապարտման հետևանքով առաջին դիմումատուն ինքնաբերաբար և մշտապես զրկվել է իր ծնողական իրավունքներից:

Իրավունք: Հոդված 6 § 1 – դիմումատուները գանգատում էին, որ իրենք չունեին հնարավորություն դատարանում վիճարկել խնամակալության որոշումը այն բանից հետո, երբ այն ուժի մեջ թողնվեց անչափահասների դատարանի կողմից: Կառավարությունը որևէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ դատական պաշտպանության այդպիսի միջոց գոյություն ուներ, բայց պնդում է, որ դատական կարգով բողոքարկումն իրավական պաշտպանության պատշաճ միջոց չէ ուժի մեջ մտած խնամակալության որոշումը վիճարկելու համար: Եվրոպական դատարանը գտնում է, որ այդ փաստարկը հակասում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների որոշման համար անկախ և անկողմնակալ դատարանի հասանելիության իրավունքի ամբողջական հիմքերին: Անկասկած հենց դատարանների գործառույթն է հանդիսանում վերա-

հսկողություն իրականացնել վարչական ակտի օրինականության նկատմամբ և երաշխավորել անձի ազատությունը կամայականությունից: Այս կապակցությամբ դատարանի կողմից տրված ցանկացած իրավական գնահատական ակնհայտորեն հաշվի կառնի վարչական վարույթի մասնակիցների համապատասխան գործողությունները: Եվրոպական դատարանը չի կարող ընդունելի համարել այն փաստարկը, որ սոցիալական ծառայության աշխատակիցների կողմից իրականացված ստուգումը, որը ներկայացվել է խնամակալության մասին որոշումը չեղյալ հայտարարելու լիազորություն ունեցեղ նախարարին, կարող էր համարվել անկախ և անկողմնակալ դատարանի առկայություն: Դատարանի այդպիսի դիրքորոշման պատճառներից մեկը, մասնավորապես այն է, որ վերը նշված ընթացակարգերի պայմաններում առկա չէր գրավոր ձևակերպված հրապարակային որոշում, և վերը նշված ընթացակարգերը չէին նախատեսում դատական վերանայման հնարավորություն:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 8: Ծնողական իրավունքներից զրկումը չափազանց խիստ միջոց է, որը պետք է կիրառվի միայն բացառիկ դեպքերում՝ ելնելով երեխայի լավագույն շահի պաշտպանության գերակա պահանջից: Մալթայի քրեական օրենսգրքի համաձայն՝ միայն որոշակի հանցագործությունների համար է որպես պատիժ նախատեսված

ծնողական իրավունքներից զրկում: Այդպիսի հանցագործություններից են՝ երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքը կամ հանցավոր անփութությունը: Հաշվի առնելով խնդրո առարկա շահերը՝ այդպիսի միջոցի նախատեսումը չի կարող համարվել պետության գնահատողական լիազորության շրջանակից դուրս գործողություն: Այդուհանդերձ նման միջոցի ավտոմատ կիրառումը՝ առանց գործի դատական քննության և որևէ ուսումնասիրության՝ արդյոք ծնողական իրավունքներից զրկելը բխում է երեխայի շահերից կամ արդյոք մեղադրյալի հետ կապված հանգամանքերը փոփոխվել են, թե ոչ, խնդրահարույց է թվում: Ավելին՝ ծնողական իրավունքներից զրկելն կրել է մշտական բնույթ, մինչև երեխայի չափահաս դառնալը: Այդպիսի հանգամանքներում, երեխայի նկատմամբ ծնողական իրավունքներից ավտոմատ կերպով զրկելը, զուգորդված հետագայում այդ որոշումը դատական կարգով վիճարկելու նպատակով դատարանի հասանելիության իրավունքի բացակայության հետ, չեն ապահովում երեխայի, առաջին դիմումատուի և ընդհանուր առմամբ հասարակության շահերի միջև արդար հավասարակշռության սահմանումը:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն)

Հոդված 46: Եվրոպական դատարանը գտել է, որ ներկայացված դիմումի շրջանակներում խախտվել է Հոդված 8-ը՝ ելնելով այն հանգամանքից, որ առաջին դիմումատուին ծնողական իրավունքներից զրկելը եղել է

ավտոմատ և կրել է մշտական բնույթ՝ հաջորդելով դիմումատուի՝ քրեական հանցագործության համար դատապարտմանը: Դատարանը գտնում է, որ հայտանաբերված խախտմամբ պատճառված վնասը փոխհատուցելու նպատակով Կառավարությունը պետք է համապատասխան ընթացակարգ ապահովի, որն առաջին դիմումատուին թույլ կտա իրացնել արդար և անկողմանակալ դատական քննության իր իրավունքը՝ քննելու առաջին դիմումատուին ծնողական իրավունքներից զրկելու հետագա հիմնավորվածության հարցը: Ընդ որում Կառավարության վրա նման պարտականություն դնելը չի կարող մեկնաբանվել որպես ապագա դատաքննության անաչառության վրա ազդող հանգամանք: Հոդված 6-ի հայտնաբերված խախտումը փոխհատուցելու նպատակով Կառավարությունը պետք է ապահովի նաև պատշաճ ընդհանուր միջոցներ՝ որպեսզի արդյունավետորեն երաշխավորի այն անձանց իրավունքների դատական պաշտպանության հասանելիությունը, որոնց շահերին առնչվում է խնամակալության մասին յուրաքանչյուր որոշում:

Հոդված 41: 4000 եվրո յուրաքանչյուրին՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Նամակագրության գաղտնիություն

Իրավաբանական գրասենյակի ամբողջ էլեկտրոնային տեղեկատվության խուզարկության և առգրավման թույլտվություն տալը՝ առանց բավարար հիմքերի. խախտում

Robathin v. Austria - 30457/06
Վճիռ 3.7.2012 [I Բաժանմունք]

Փաստեր: 2006թ. խուզարկության միջնորդությունը քննող դատավորն իր որոշմամբ թույլատրել է խուզարկություն իրականացնել դիմումատուին պատկանող տարածքում: Դիմումատուն իրավաբան է, որը հետախուզվում էր գողության և խարդախության հետ կապված մի շարք հանցագործությունների առնչությամբ: Խուզարկությունը թույլատրող որոշումը խուզարկության առարկան չէր սահմանափակում միայն այն տեղեկատվությամբ, որն առնչվում էր ենթադրյալ հանցագործությունների հետ և թույլատրում էր խուզարկել գրասենյակի տվյալների ողջ բազան: Խուզարկությունից հետո վերաքննիչ պալատը թույլատրել է խուզարկության արդյունքում ձեռք բերված նյութերի ուսումնասիրումը, համապատասխան նշում անելուց հետո առ այն, որ համապատասխան տեղեկատվությունն առգրավվել է նախնական քննության շրջանակներում, և դիմումատուն չի կարող հիմնվել մասնագիտական գործունեության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու իր պարտականության վրա, երբ ինքը գտնվում է կասկածյալի կարգավիճակում: Դիմումատուն ի վերջո արդարացվել է:

Իրավունք Հոդված 8 - Էլեկտրոնային տվյալների խուզարկությունն ու առգրավումը հանդիսանում է միջամտություն նամակագրության գաղտնիության իրավունքի ոլորտ, ինչպես որ սահմանված է

Հոդված 8-ում և հետապնդել է հանցագործության կանխարգելման իրավաչափ նպատակ: Դիմումատուն նշել է, որ խուզարկության թույլտվությունը շատ անորոշ էր ձևակերպված և այդպիսով չէր համապատասխանում օրենքին: Դիմումատուի սույն փաստարկը պետք է քննության առնվի համաչափության սկզբունքի պահպանման տեսանկյունից: Խուզարկության թույլտվության որոշումը կայացրել է դատավորը՝ դիմումատուի դեմ հարուցված քրեական գործով վարույթի շրջանակներում: Այդ որոշման մեջ տեղ էին գտել տվյալներ ենթադրյալ հանցագործությունների մասին, դրանց կատարման ժամանակը և դրանցով պատճառված ենթադրյալ վնասը: Այն փաստը, որ դիմումատուն ի վերջո արդարացվել է, չի նշանակում, որ խուզարկության արտոնման որոշումն ընդունելու ժամանակ դիմումատուին կասկածելու ողջամիտ հիմքեր չեն եղել: Այդուհանդերձ խնդրո առարկա որոշումը ձևակերպված է շատ ընդհանրական եզրույթներով. այն ընդհանուր և առանց որևէ սահմանափակման լիազորում է փաստաթղթերի, անձնական համակարգիչների և սկավառակների, դրանցում առկա տվյալների, գրքերի, բանկային փաստաթղթերի, դիմումատուի օգտին կատարված նվիրատվության և կտակի գործարքների խուզարկություն և առգրավում: Չնայած դիմումատուն ապահովված էր մի շարք դատավարական երաշխիքներով, վերաքննիչ պալատը, որին դիմումատուն գանգատարկել է խուզարկության որոշումը, թույլատրել է կատարել դիմումատուի իրավաբանական գրասենյակում պահվող ամբողջ

էլեկտրոնային տեղեկատվության խուզարկություն՝ չսահմանափակելով խուզարկության առարկան միայն այն տեղեկատվությամբ, որն առնչվում էր դիմումատուի և նրա կողմից ենթադրաբար կատարված հանցագործություններից տուժած անձանց միջև փոխհարաբերություններին:

Կայացնելով նման որոշում՝ վերաքննիչ պալատն այն հիմնավորել է լոկ համառոտ և բավական ընդհանուր պատճառներով: Հաշվի առնելով իրավաբանական գրասենյակին բնորոշ առանձնահատուկ հանգամանքները՝ դատարանի կողմից պետք է ներկայացվեին այն առանձնահատուկ հիմքերը, որոնք թույլ են տալիս կայացնել նման լայնածավալ խուզարկությունը թույլատրող որոշում: Նման հիմքերի բացակայության պայմաններում ամբողջ տեղեկատվության առգրավումն ու հետազոտումն անցել է իրավաչափ նպատակին հասնելու համար անհրաժեշտ գործողությունների սահմանը:

Եզրակացություն` խախտում (5 ձայն ընդդեմ երկուսի):

Հոդված 41: 3000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

ՀՈԴՎԱԾ 10

Արտահայտվելու ազատություն

Գովազդային պաստառի հրապարակային ցուցադրության արգելումը հրատարակիչների հակաբարոյական վարքագծի և կրոնական քարոզ-

չություն իրականացնող ինտերնետային կայքին հղում անելու հետևանքով. խախտում չկա

Mouvement raelien suisse

v. Switzerland - 16354/06

Վճիռ 13.7.2012 [ՄԴ]

Փաստեր: Դիմումատուն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որը հանդիսանում է Ռաելյան շարժման շվեցարական ճյուղը, որի հայտարարված նպատակը այլմոլորակայինների հետ նախնական կապեր և լավ հարաբերություններ հաստատելն է: 2001թ. կազմակերպությունը դիմել է ոստիկանություն՝ խնդրելով թույլատրել իրեն փակցնել պաստառներ, որոնց վրա այլ պատկերների շարքում տեղ են գտել այլմոլորակայինների դեմքերի և թռչող ափսեի պատկերները, և նշված էին Շարժման կայքի հասցեն և հեռախոսահամարը: Ոստիկանությունը մերժել է արտոնել նման պաստառների փակցումը: Կազմակերպությունը գանգատարկել է ոստիկանության որոշումը, բայց նրա գանգատները նույնպես մերժվել են:

2011թ. հունվարի 13-ի վճռում (Տես [Նախադեպային տեղեկատու No. 137](#)) Եվրոպական դատարանի չորրորդ քննող դատավորները միաձայն որոշեցին, որ սույն գործով Կոնվենցիայի Հոդված 10-ի խախտումը բացակայում է այն հիմքով, որ Շվեցարիայի իրավասու պետական մարմինները բավարար հիմք ունեին անհրաժեշտաբար մերժելու դիմումատու կազմակերպության դիմումը՝ պաստառների փակցման



արտոնում ստանալու վերաբերյալ: Նման հիմք է հանդիսացել պաստառների վրա «Կլոնաիդ» ընկերության ինտերնետային կայքի հասցեի առկայությունը (սույն ընկերությունն առաջարկում է կլոնավորման հետ կապված հատուկ, ապօրինի ծառայություններ), ինչպես նաև Շարժման շրջանակներում անչափահասների սեռական շահագործման վտանգը և <<հանճարների իշխանության>> տեսության պաշտպանությունը (սույն տեսության համաձայն՝ իշխանությունը պետք է տրվի մտավոր առավելագույն կարողություններ ունեցող անհատներին):

Իրավունք: Հոդված 10 - Դիմումատու կազմակերպության արտահայտվելու իրավունքի սահմանափակումը, կապված վերը նշված պաստառների արշավի արգելման հետ, նախատեսված էր օրենքով: Սույն սահմանափակումը հետապնդում էր իրավաչափ նպատակներ, այն է՝ հանցավորության կանխարգելումը և այլոց առողջության, բարոյականության և իրավունքների պաշտպանությունը: Սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ազգային մարմինները պետք է թույլ տային դիմումատուին տարածել իր գաղափարները պաստառների արշավի միջոցով՝ դրա համար հասանելի դարձնելով հանրային համապատասխան տարածքներ, թե ոչ: Խնդրո առարկա արշավը նպատակ ուներ հիմնականում գրավել հանրության ուշադրությունը մարդկանց մի խմբի գաղափարների և գործողությունների վրա, որը ենթադրաբար ունի կրոնական ուղղվածություն և որը տարածում է, ըստ որոշ պնդումների,

այլմոլորակայինների կողմից ուղարկված ուղերձ՝ այդ նպատակով հղում անելով իր կայքին ու նշելով դրա հասցեն: Այսպիսով սույն կայքը միայն մասամբ է արտահայտում սոցիալական կամ քաղաքական գաղափարներ. կայքի հիմնական նպատակը կազմակերպության գործունեության պատճառի վրա հանրության ուշադրությունը գրավելն է: Նույնիսկ եթե դիմումատու կազմակերպության արտահայտչամիջոցները դուրս են գալիս գովազդային համատեքստից, այդուհանդերձ դրանք առավել մոտ են կոմերցիոն արտահայտչամիջոցներին, քանզի ունեն որոշակի քարոզչական գործառույթ: Հետևաբար Պետության գնահատողական լիազորության շրջանակն ավելի լայն է: Այդ պատճառով ոչ ամբողջովին քաղաքական բնույթի քարոզարշավների ժամանակ հանրային վայրերում գովազդային վահանակների խնդրի մենեջմենթը յուրաքանչյուր պետությունում և նույնիսկ միևնույն պետության տարբեր շրջաններում կարող է ունենալ իր առանձնահատկությունները: Սույն պատճառով Եվրոպական դատարանը միայն լուրջ պատճառների դեպքում կարող էր Պետության համապատասխան մարմինների կողմից կոնկրետ փաստական իրավիճակին տրված իրավական գնահատականի փոխարեն տալ փաստական հանգամանքների սեփական գնահատականը: Վերոնշյալ պաստառի փակցնումը ակնհայտորեն նպատակ ուներ գրավելու մարդկանց ուշադրությունն ինտերնետային կայքի նկատմամբ. ինտերնետային կայքի հասցեն գրված էր մզեցված տառերով, իսկ հասցեի տակ նշված էր հետևյալ

կարգախոսը՝ «Ուղերձ այլմոլորակայիններին»։ Այսպիսով Դատարանը պետք է դիտարկի ոչ միայն պաստառը որպես այդպիսին, այլև ինտերնետային կայքի բովանդակությունը։ Դատարանի քննության առարկայի մեջ չի մտնում ոստիկանության վերը նշված որոշման դատական վերանայման արդյունավետության հարցը։ Ներպետական դատարանները, որոնք քննել են գործը, մանրամասնորեն ներկայացրել են պաստառների արշավի արգելման պատճառները՝ մասնավորապես որպես այդպիսիք նշելով աջակցությունը մարդու կլոնավորմանը և <<հանճարների իշխանության>> տեսությանը, ինչպես նաև վտանգը, որ Շարժման գրվածքներն ու գաղափարները կարող են հանգեցնել Շարժման որոշ անդամների կողմից անչափահասների նկատմամբ սեռական ոտնձգության։ Թեև վերը նշված պատճառներից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, չէր կարող հիմք հանդիսանալ պաստառների փակցնումն արգելելու համար, ներպետական իրավասու մարմինները կարող էին պաստառների փակցնումն արգելել՝ որպես արգելման հիմք ընդունելով իրադրությունն ամբողջությամբ, այսինքն՝ վերը նշված պատճառների ամբողջությունը։ Այս կապակցությամբ Մեծ պալատը որևէ հիմք չի տեսնում կայացնելու Պալատի վճռից տարբերվող վճիռ։ Այսպիսով ներպետական մարմինների կողմից արտահայտված մտահոգություններն ունեն պատշաճ և բավարար հիմքեր։ Ավելին՝ Պալատը գտավ, որ պաստառների փակցնումը մերժելու որոշումը ուներ գործողության սահմանափակ շրջանակ, քանզի դիմումատու կազմա-

կերպությունը պահպանում էր իր իրավունքը արտահայտել իր համոզմունքները տեղեկատվության փոխանցման բազմաթիվ այլ միջոցներով։ Դիմումատու կազմակերպությունը պնդում է, որ Պալատի սույն դիրքորոշումը հակասական է։ Դատարանի կարծիքով, սակայն, որևէ հակասություն գոյություն չունի։ Դատարանի դիրքորոշումը համընկնում է Կառավարության մոտեցման հետ այն առումով, որ պետք է տարանջատել կազմակերպության գործունեության նպատակի և այդ նպատակին հասնելու միջոցների միջև։ Համապատասխանաբար սույն գործում կարող է անահամաչափ համարվել կազմակերպության գործունեության կամ կազմակերպության ինտերնետային կայքի արգելումը վերը նշված գործոնների հիման վրա։ Այսպիսով Պետության կողմից կիրառված վարչական միջոցի գործողության շրջանակի սահմանափակումը, այն է՝ հանրային վայրերում խնդրո առարկա պաստառների ցուցադրման արգելումը, ապահովում է նվազագույն միջամտություն դիմումատու կազմակերպության իրավունքներին։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունը հնարավորություն ունի շարունակելու տարածել իր գաղափարները, մասնավորապես իր ինտերնետային կայքի կամ թոուցիկների միջոցով (վերջիններս գցվում են փոստարկղերի մեջ կամ առձեռն հանձնվում փողոցում)՝ Շվեցարիայի իրավասու մարմինների կողմից կիրառված իրավական միջոցը անհամաչափ չի հանդիսանում։ Համապատասխանաբար Շվեցարիայի ներպետական մարմինները չեն սահմանազանցել սույն դեպքում իրենց

տրված գնահատողական լիազորության լայն շրջանակը. առկա էին պատշաճ և բավարար հիմքեր պետական մարմինների կողմից նման որոշումների կայացման համար և այդ հիմքերը համապատասխանում էին հանրային գերակա շահին: Եվրոպական դատարանը որևէ լուրջ պատճառ չի տեսնում Շվեցարիայի վերջին ատյանի դատարանի կողմից սույն գործով տրված իրավական գնահատականը սեփական իրավական դիրքորոշմամբ փոխարինելու համար, քանզի ներպետական վերջին ատյանի դատարանը գործը քննել է մանրամասնորեն և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կողմից սահմանափակ սկզբունքների շրջանակներում:

Եզրակացություն՝ խախտում չկա (ինը ձայն ընդդեմ ութի):

Որոշում, որը պարտավորեցնում է լրագրողին փոխհատուցել մերկապարուիու հետ ունեցած հարցազրույցի հրապարակմամբ պատճառված վնասները, որտեղ մերկապարուիին մեղադրում էր իր նախկին գործատուին քրեական հանցագործություն կատարելու մեջ. խախտում

Bjork Eipsdottir v. Iceland - 46443/09
Վճիռ 10.7.2012 [IV Բաժանմունք]

Փաստեր: 2007 թ. Իսլանդիայի ԶԼՄ-ներում ծավալվել է հանրային քննարկում այն մասին, թե արդյոք ստրիպտիզ - ակումբների վերաբերյալ կանոնակարգերը պետք է սահմանափակ կիրառություն ստանան, թե բոլոր ակումբների գործունեությունը

պետք է արգելվի: Այն բանից հետո, երբ լույս է տեսել այդ թեմայով առաջին հոդվածը, որտեղ 3 մերկապարուիիններ նշել են, որ իրենց բավարարում է աշխատանքային միջավայրն ակումբում, դիմումատուի հետ, որը մասնագիտությամբ լրագրող է, կապվել է նախկին մերկապարուիի, որն առաջարկել է պատմել ստրիպտիզ-ակումբում իր աշխատանքի մասին: Դիմումատուի լրագրում հոդված է տպագրվել, որը հիմնված է մերկապարուիու հետ նրա հարցազրույցի վրա, որում պարուիին խոսել է ակումբում առկա մարմնավաճառության դեպքերի, հետագայում իր թմրամոլության և իրեն հասցեագրված, իր աշխատանքի հետ կապված սպառնալիքների մասին: Հարցազրույցի կողքին լրագիրը տպագրել է վերը նշված ակումբի սեփականատիրոջ պատասխանը, որում նա հերքել է իր և իր ակումբի դեմ ուղղված մեղադրանքները: Այնուհետև ակումբի սեփականատերը դիմումատուի, լրագրի խմբագրի և նախկին մերկապարուիու դեմ զրպարտության հայց է ներկայացրել դատարան: Ավելի ուշ հայցվորը՝ ակումբի սեփականատերը, հաշտության համաձայնություն է կնքել նախկին մերկապարուիու հետ և նրա մասով հրաժարվել հայցից: Գերագույն դատարանը դիմումատուին պատասխանատու է ճանաչել զրպարտության համար:

Իրավունք: Հոդված 10 - Եվրոպական դատարանն ընդունում է, որ այն հիմքերը, որոնց ուժով Իսլանդիայի գերագույն դատարանը վերը նշված գործողություններն Իսլանդիայի օրենքի



համաձայն ճանաչել է որպես զրպարտություն, համապատասխանում են Կոնվենցիայի Հոդված 10-ի նպատակներին: Գերագույն դատարանի նման որոշումն ունեցել է իրավաչափ նպատակ, այն է՝ այլոց իրավունքների և բարի համբավի պաշտպանությունը: Ինչ վերաբերում է նրան, թե արդյոք այդ պատճառները նաև բավարար են զրպարտության փաստը հաստատված համարելու համար, Դատարանը գտնում է, որ Հոդված 10-ը, ամբողջությամբ վերցրած, վերաբերում է մի իրադարձության, որը հաշվետու ժամանակահատվածում Իսլանդիայում ստացել է լայն հանրային արձագանք: Ստրիպտիզ ակումբների խնդրի վերաբերյալ հանրային բանավեճը շարունակվում էր երկար ժամանակ, և այդ հարցի կապակցությամբ մեկ ուրիշ ամսագրում նախկինում հոդված էր տպագրվել ստրիպտիզ ակումբների և մարմնավաճառության միջև կապի մասին: Սկսելով զբաղվել գործունեության այդ տեսակով՝ ակումբի սեփականատերը պետք է գիտակցի, որ անխուսափելիորեն և գիտակցաբար մուտք է գործում հանրային ոլորտ, ուր ընդունելի քննադատության սահմաններն անհրաժեշտաբար ավելի լայն են, քան մասնավոր անձանց դեպքում: Միաժամանակ տեղեկատվություն տարածելու լրագրողների իրավունքը այն հարցերի շուրջ, որոնք կապված են հանրային շահի հետ և մեծ հետաքրքրություն են առաջացնում, պահանջում է, որ նրանք գործեն բարեխղճորեն, հիմնվեն ճշգրիտ փաստերի վրա ու ներկայացնեն վստահելի և հստակ տեղեկատվություն՝

լրագրողական էթիկայի նորմերին համապատասխան: Որպես զրպարտություն ներկայացվող արտահայտություններն արվել են նախկին մերկապարուհու կողմից, ով ինքն է կապվել դիմումատուի հետ, որպեսզի տա իր գնահատականը մերկապարուհու մասնագիտության մասին՝ հիմնվելով սեփական փորձի վրա: Ավելի ուշ այդ պարուհին հաստատել է, որ իր կողմից ներկայացված փաստերը ճշգրիտ են, և ակումբի սեփականատերը հետագայում նրա մասով հրաժարվել է զրպարտության հայցից: Միաժամանակ դիմումատուն ապացույցներ է ներկայացրել ի հաստատումն իր վիճարկվող արտահայտությունների: Նման ապացույց է հանդիսանում ակումբում սեռական բնույթի ծառայությունների մատուցման դեպքի մասին ԱՄՆ-ի դեսպանության զեկույցը և ակումբի սեփականատիրոջ հարցազրույցը, երբ ակումբի սեփականատերն ինքն է ընդունում, որ իր ակումբում եղել են դեպքեր, երբ հաճախորդներին առաջարկվել են սեռական բնույթի ծառայություններ: Այն փաստը, որ Գերագույն դատարանը թերացել է փաստական այդպիսի հանգամանքների ուսումնասիրման հարցում, վիճահարույց է դարձնում այն հանգամանքը, թե արդյոք դիմումատուին իրական հնարավորություն է տրվել ազատվել պատասխանատվությունից՝ նրա ներկայացրած փաստարկների ճշմարտացիությունը որոշելու միջոցով: Ավելին՝ նախկին մերկապարուհու հետ դիմումատուի հարցազրույցը պարունակել է նաև հակակշռող տարրեր, օրինակ՝ հղում է

արվել ակումբի պարուհիների հետ ունեցած նախորդ հարցազրույցի վրա, որում մերկապարուհիները հերքել են ակումբի և իրենց հասցեին արված բացասական մեկնաբանությունները, իսկ ակումբի սեփականատերն ակումբում ենթադրաբար տեղի ունեցող դեպքերի մասին հնարավորություն է ունեցել հայտնել սեփական դիրքորոշումը: Նորությունների թողարկումը, որը հիմնված է հարցազրույցների վրա, անկախ իրենց խմբագրված լինել-չլինելու հանգամանքից, այն կարևորագույն միջոցներից մեկն է, որը հնարավորություն է տալիս մամուլին իրականացնել <<հանրության հետախույզի>> իր գործառույթը: Սույն հանգամանքների պայմաններում Եվրոպական դատարանը գտնում է, որ դիմումատուն գործել է բարեխղճորեն, պատասխանատու լրագրողից ակնկալվող ջանասիրությամբ, որը տեղեկատվություն է ներկայացնում հանրային հետաքրքրություն ունեցող թեմաներով և չի կարող քննադատության ենթարկվել այն բանի համար, որ չի պարզել վիճարկվող հայտարարությունների ճշմարտացիությունը: Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել բավարար հիմնավորումներ, որոնք ցույց կտային ժողովրդավարական հասարակությունում դիմումատուի արտահայտման իրավունքին միջամտելու անհրաժեշտությունը:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41: 5000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում,

7790 եվրո՝ որպես նյութական վնասի փոխհատուցում

(Տես նաև [Erla Hlynisdottir v. Iceland](#), թիվ 43380/10, 10 հուլիսի, 2012թ.):

Տուգանքի նշանակում հակառասիստական ցույցի դեմ կազմակերպված բողոքի ակցիայի ժամանակ պատմական հակասական ենթատեքստով դրոշի ցուցադրության համար. խախտում

[Faber v. Hungary](#) - 40721/08

Վճիռ 24.7.2012 [II Բաժանմունք]

Փաստեր: 2007թ. Հունգարիայի սոցիալիստական կուսակցությունը (ՀՍԿ) Բուդապեշտում կազմակերպեց ցույց ընդդեմ ռասիզմի և ատելության: Միաժամանակ աջ քաղաքական հոսանքը ներկայացնող կուսակցության անդամները, հավաքվելով ՀՍԿ-ի բողոքի ակցիայի վայրին հարող տարածքում, արտահայտում էին իրենց անհամաձայնությունը: Դիմումատուն լուռ պահել է այսպես կոչված արպադ ոճի շերտավոր դրոշը, որը կարող էր ընկալվել կամ որպես պատմական խորհրդանիշ, կամ որպես նախորդ ռեժիմի հիշատակի խորհրդանիշ: Ոստիկանության աշխատակիցները, որոնք հետևել են ակցիայի ընթացքին, պահանջել են դիմումատուից կամ թաքցնել դրոշը, կամ հեռանալ: Դիմումատուն մերժել է կատարել ոստիկանության աշխատակիցների պահանջը՝ նշելով, որ դրոշը հանդիսանում է պատմական խորհրդանիշ, և չկա որևէ օրենք, որն

արգելում է ցուցադրել այդ դրոշմը: Դիմումատուն ձեռքակալվել է և տուգանվել մոտավորապես 200 եվրո գումարով:

Իրավունք: Հոդված 10ը կարդալ Հոդված 11-ի համատեքստում:

Դիմումատուի արտահայտվելու ազատությունը պետք է հավասարակշռվի ՀՍԿ-ի ցուցարարների՝ իրենց հավաքի անխափան ընթացքի ապահովման իրավունքով: Այս կապակցությամբ պետությունների կառավարություններին տրված է հայեցողական ընդարձակ իրավագործություն ոչ միայն այն պատճառով, որ սկզբունքորեն երկու մրցակցող իրավունքները պետք է հավասարապես պաշտպանվեն, ինչը համապատասխանում է երկու հակադիր հայացքների բախման դեպքում պետության չեզոքության պարտավորությանը, այլև այն հանգամանքի գիտակցմամբ, որ ներպետական իրավասու մարմիններն ավելի մեծ հնարավարություններ ունեն գնահատելու առկա ռիսկերը և կիրառվելիք համապատասխան միջոցները: Այդուհանդերձ պետության նման հայեցողական լիազորությունը կարող է կիրառվել միայն այն ժամանակ, երբ առկա է հակադիր հայացքներ ունեցող խմբի կողմից բռնությամբ ուղեկցվող ցույցի լուրջ վտանգ, և ներկայացվում են այդ վտանգն ապացուցող համոզիչ հիմքեր: Որոշակի հայացքներ ունեցող ցուցարարներին ընդդիմացող խմբերն իրավունք ունեն արտահայտելու իրենց անհամաձայնությունը: Հետևաբար պետությունն իր իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի ընթացքում

պարտավոր է կատարել իր պոզիտիվ պարտավորությունը պաշտպանելու ցույց անող երկու խմբի իրավունքները և գտնել իրավունքների նվազագույն սահմանափակում ապահովող միջոցներ, որոնք սկզբունքորեն թույլ կտան բողոքի երկու ակցիաներին տեղի ունենալ: Դիմումատուի գործում իրավունքների նկատմամբ միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակներ, այն է՝ հասարակական կարգի և այլոց իրավունքների պաշտպանությունը: Դատարանին չի ներկայացվել որևէ փաստարկ, առ այն, որ ցույցին արպադ ոճի շերտավոր դրոշի առկայության հետևանքով առաջացել է բռնության էական վտանգ, կամ Կառավարության ընկալմամբ սադրիչ համարվող խոհրդանիշի օգտագործումը հանգեցրել է բռնության ուղղակի սպառնալիքի կամ վտանգի: Խնդրո առարկա դրոշի ցուցադրման հետևանքով ցույցի բնականոն ընթացքը որևէ կերպ չի խոչընդոտվել: Ավելին՝ ոչ Դիմումատուն, ոչ էլ մյուս ցուցարարները չեն կատարել որևէ սպառնալից կամ վիրավորական գործողություն: Հաշվի առնելով ցույցի ընթացքում դիմումատուի պասիվ վարքագիծը՝ դիմումատուի մասնակցությամբ անցկացվող ցույցի հեռավարությունը ՀՍԿ-ի կողմից կազմակերպված բողոքի ակցիայից և հասարակական անվտանգության խախտման կամ խոռվության բացահայտ վտանգի բացակայությունը՝ արտահայտման և հավաքների իրավունքները սահմանափակող միջոցների արդարացվածության վերաբերյալ Կառավարության կողմից ներկայացված փաստարկները պատշաճ և բավարար չեն: Ի լրումն

վերոշարադրյալի՝ խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունքն այնքան մեծ կարևորություն ունի, որ այն չի կարող որևէ կերպ սահմանափակվել այնքան ժամանակ, քանի դեռ անձն ինքը չի կատարել որևէ դատապարտելի արարք: Դիմումատուի կողմից վերը նշված դրոշի ցուցադրումը ՀՍԿ-ի կողմից կազմակերպված ցույցի անցկացման վայրի մերձակայքում պետք է համարվի դիմումատուի քաղաքական հայացքների արտահայտման՝ նրա կողմից ընտրված ձևը: Այն նպատակ է ունեցել արտահայտել դիմումատուի անհամաձայնությունը ՀՍԿ-ի կողմից կազմակերպված բողոքի ակցիայի մասնակիցների գաղափարների հետ: Ինչ վերաբերում է վիրավորական արտահայտությունների թույլատրելիությանը, ապա միայն այդ արտահայտությունների համատեքստի մանրակրկիտ հետազոտման արդյունքում է հնարավոր պարզել, թե այդ արտահայտություններն արվել են ինչ-որ առիթով առաջացած զայրույթի հետևանքով, ինչը Հոդված 10-ի խախտում չի հանդիսանում, թե անձը, նման արտահայտություններ անելով, չարաշահել է ժողովրդավարական հասարակությունում հանդուրժողականության սկզբունքը: Թշնամական զգացումները կամ նույնիսկ վիրավորանքը, եթե անձի արժանապատվությունը չեն նվաստացնում, Հոդված 10-ի, պար. 2-ի շրջանակներում գերակա հանրային շահի դրսևորում չեն հանդիսանում հատկապես այն դեպքում, երբ խնդրո առարկա դրոշը երբեք օրենքով արգելված չի եղել: Ի հավելումն վերոգրյալի՝ հարկ է նշել, որ եթե դիմումատուն արհամարհական

վերաբերմունք ցուցաբերել տոտալիտար ռեժիմի զոհերի նկատմամբ, նման վարքագիծը կարող էր համարվել Կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտում: Դատարանը դիմումատուի գործով ներկայացված փաստական հանգամանքների և ապացույցների հետազոտման արդյունքում նման վարքագծի առկայությունը հիմնավոր չի համարում:

Եզրակացություն՝ խախտում (վեց ձայն ընդեմ մեկի):

Հոդված 41: 1500 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում (Տես նաև *Ollinger v. Austria*, թիվ 76900/01, 29 հունիսի, 2006թ. և *Vajnai v. Hungary*, թիվ 33629/06, 8 հուլիսի, 2008թ., *Նախադեպային տեղեկատու No. 110*):

ՀՈԴՎԱԾ 11

Միավորման ազատություն

Եկեղեցու աշխատողների արհեստակցական միությունը գրանցելու մերժումը. գործը ներկայացվել է Մեծ պալատի քննությանը

Sindicatul «Pastorul cel Bun v. Romania - 2330/09

Վճիռ 31.1.2012 [III Բաժանմունք]

2008թ. ապրիլին Ռումինական ուղղափառ եկեղեցու 35 հոգևորականներ և աշխարհիկ անդամներ որոշել են ստեղծել արհեստակցական միություն: Արհեստակցական միության ընտրված նախագահը դիմել է առաջին ատյանի դատարան՝ խնդրելով ճանաչել

արհմիության իրավասությունները և գրանցել այն արհմիությունների ռեգիստրում: Սակայն արքեպիսկոպոսական թեմի ներկայացուցիչը սույն հարցի կապակցությամբ առարկություն է ներկայացրել: Արհեստակցական միության ներկայացուցիչը վերահաստատել է դատարանին ուղղված խնդրանքը, որն ստացել է նաև հանրային դատախազի գրասենյակի աջակցությունը: 2008թ. մայիսին դատարանը բավարարել է արհմիության դիմումը և կարգադրեց առհեստակցական միությունը գրանցել ռեգիստրում՝ այդպիսով ճանաչելով նրա իրավասությունները: Արքեպիսկոպոսական թեմը բողոքարկել է այդ վճիռը. 2008թ. հուլիսին իր վերջնական վճռում շրջանային դատարանը բավարարել է գանգատը, բեկանել առաջին ատյանի դատարանի վճիռը, ուժը կորցրած ճանաչել արհմիության դիմումն իր իրավասությունները ճանաչելու և արհեստակցական միությունների ռեգիստրում գրանցվելու վերաբերյալ:

2012թ. հունվարի 31-ի վճռում (Տե՛ս [Նախադեպային տեղեկատու No. 148](#)) Եվրոպական դատարանի Պալատը 5 կողմ և երկու դեմ ձայներով գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի հոդված 11-ի խախտում: Դատարանի կարծիքով, այնպիսի իրավական ակտի կայացման համար, ինչպիսին դիմումատու արհմիության գրանցման մերժումն է, չկար <<հանրային գերակա պահանջ>> կամ բավարար պատճառներ, հետևաբար սույն հարցի նման իրավական լուծումն անհամաչափ է պետության հետապնդած նպատակի համեմատ և որպես

հետևանք անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակության մեջ:

2012թ. հուլիս 9-ին Կառավարության խնդրանքով գործը ներկայացվել է Մեծ պալատի քննությանը:

ՀՈԴՎԱԾ 13

Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

Սեփականատերերի փոխհատուցման վերաբերյալ կայացված վարչական որոշումների կատարման ապահովման նպատակով դատական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայությունը. խախտում

Manushaqe Puto and Others v. Albania -

604/07 et al.

Վճիռ 31.7.2012 [IV Բաժանմունք]

Փաստեր: 1994-1999թթ. անշարժ գույքի վերաբերյալ գործեր քննող հանձնաժողովները ճանաչել են դիմումատուների սեփականության իրավունքը մի շարք հողատարածքների նկատմամբ և որոշել, որ դիմումատուներն ունեն փոխհատուցման իրավունք: Չնայած դիմումատուների մի մասը վերականգնել է սեփականության իրավունքն իրենց պատկանող հողամասերի մի մասին նկատմամբ, բայց նրանք դրամական փոխհատուցում չեն ստացել մնացյալ հողատարածքների դիմաց:

Իրավունք: Հոդված 13 - Եվրոպական դատարանը գտնում է, որ Ալբանիայում գոյություն չունի ներպետական արդյունավետ դատական պաշտպանության միջոց, որը թույլ կտար

ապահովել համաչափ և բավարար փոխհատուցում հանձնաժողովների՝ փոխհատուցում սահմանող որոշումների կատարումը երկարատև ժամկետով ուշացնելու համար: Չնայած այն հանգամանքին, որ *Ռամադին և այլք (Ramadhi and Others)*⁵ գործով Դատարանի կայացրած վճիղ հետո ընդունվել են բազմաթիվ իրավական ակտեր, դրությունը մնացել է անբավարար: Փոխհատուցման ոչ դրամական ձևերը, որոնք սահմանվել են Ալբանիայի օրենսդրությամբ, արդյունավետ չեն եղել մասնավորապես այն առումով, որ չեն ներկայացվել ապացույցներ, առ այն, որ առհասարակ նման ձևով փոխհատուցումների վճարում եղել է: Ինչ վերաբերում է պետական պարտատոմսերի ձևով փոխհատուցման վճարմանը, Կառավարության կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որ փոխհատուցման նման ձևը նախատեսված է օրենսդրությամբ: Դրամական փոխհատուցման պարագայում պետական մարմինների որոշումներով այդպիսի փոխհատուցման իրավունքը ճանաչվում էր այն դեպքերում, երբ համապատասխան հանձնաժողովը փոխհատուցում էր սահմանում ամբողջ գույքի նկատմամբ: Դրամական փոխհատուցման իրավունքը չէր ճանաչվում մասնակի փոխհատուցման կամ փոխհատուցման այլ ձևերի դեպքերում: Վերը նշված որոշումներով դրամական առավելագույն փոխհատուցումը սահմանվում էր 200 քմ հողատարածքի արժեքի չափով: Այն դիմումատուները, որոնց դիմումները հաշվետու տարում չէին

քննարկվել, պետք է իրենց դիմումները կրկին անգամ ներկայացնեին հաջորդ տարի: Սահմանվող փոխհատուցումների մեջ չէր հաշվարկվում ոչ նյութական բնույթի այն վնասը, որը պատճառվել էր, փոխհատուցման որոշումների կատարման ուշացման հետևանքով: Հետևաբար փոխհատուցման սույն ձևը ևս արդյունավետ չէր:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 46: Հաշվի առնելով այն մեծաթիվ խնդիրները, որոնք առկա են Ալբանիայում՝ կապված փոխհատուցման մեխանիզմի հետ և որոնք շարունակում են գոյություն ունենալ մի շարք գործերով⁶ Դատարանի վճիռներից հետո, ինչպես նաև կարևորելով ներպետական մակարդակում դիմումատուներին հասանելիք համաչափ փոխհատուցումն արագորեն վճարելու անհետաձգելի անհրաժեշտությունը՝ Դատարանը պարտադիր է համարում կարգավորիչ վճիռն ընթացակարգի կիրառումը: Կառավարությունից պահանջվում է անհապաղ ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցներ՝ փոխհատուցման իրավունքի իրացումը արդյունավետորեն ապահովելու նպատակով՝ արդար հարաբերակցություն սահմանելով տարբեր գործերում շոշափվող տարաբնույթ շահերի միջև:

⁶ *Caush Driza v. Albania*, թիվ 10810/05, 15 մարտի, 2011թ., *Ramadhi and Others v. Albania*, հղումը վերևում, *Vrioni and Others v. Albania and Italy*, թիվ 35720/04 and 42832/06, 29 սեպտեմբերի 2009թ. և *Delvina v. Albania*, թիվ 49106/06, 8 մարտի, 2011թ.

⁵ *Ramadhi and others v Albania*, թիվ 38222/02, 13 նոյեմբերի, 2007թ.

Այս կապակցությամբ, հաշվի առնելով, որ 2004-2010թթ. անշարժ գույքի վերաբերյալ օրենսդրությունն Ալբանիայում փոփոխվել է առնվազն յոթ անգամ, Դատարանն ընդգծում է, որ պետք է խուսափել օրենսդրության հաճախակի փոփոխություններից, քանզի դա անխուսափելիորեն հանգեցնում է իրավական որոշակիության մակարդակի անկմանը: Պատասխանող պետությունը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի խնդրի ֆինանսական և իրավական բոլոր կողմերը, նախքան հետագա փոփոխությունների ներկայացումը: Ճշգրիտ տեղեկատվական համակարգի առկայությունը, որը նաև կարտացոլի դատական վերանայման մեխանիզմի ներդրման միջոցով տեղի ունենալիք փոփոխությունները, հնարավորություն կտա Կառավարությանը մշակել փոխհատուցումների վճարման ամբողջական ծրագիր և հաշվարկել դրա հետ կապված ֆինանսական ծախսերը ու փոխհատուցման մեխանիզմի ֆինանսական այլ բաղկացուցիչները: Տեղեկատվական համակարգի առկայության և փոխհատուցման վճարման համապարփակ ծրագրի մշակման ու ֆինանսական ծախսերի հաշվարկի հետ միաժամանակ պետք է ստեղծվի փոխհատուցումների վճարման մանրակրկիտ մշակված, հստակ համակարգ, որը զերծ կլինի ժամանակատար բյուրոկրատական ընթացակարգերից՝ հաշվի առնելով խնդրի առնչությամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կողմից մշակված համապատասխան սկզբունքները: Կառավարությունը

պետք է նաև սկսի փոխհատուցման այլընտրանքային ձևերի կիրառումը՝ բյուջեի ծախսերը նվազեցնելու նպատակով: Փոխհատուցումների սահմանման հետ կապված որոշումների կայացման գործընթացը պետք է լինի թափանցիկ և արդյունավետ, որոշումները պետք է լինեն հստակ և բավարար չափով պատճառաբանված: Պետությունը պետք է համապատասխան երաշխիքներ ստեղծի այդ որոշումների՝ դատական կարգով վերանայման համար: Անշարժ գույքի գրանցման արդյունավետ համակարգի ներդրումը՝ այդ թվում ճշգրիտ, միատեսակ, քարտեզագրման վրա հիմնված տեղեկատվական բազայի ստեղծումը նույնպես անհրաժեշտ է իրավական գործարքների կնքմանն օժանդակելու և գործարքների կնքման գործընթացը թեթևացնելու համար: Առանցքային նշանակություն ունի փոխհատուցման ընթացակարգի յուրաքանչյուր փուլի համար իրական, օրենքով նախատեսված և պարտադիր ժամանակային սահմանափակումների առկայությունը:

Սույն խնդրի կարևորությունը և դրա համապարփակ ու գործնական լուծումը ենթադրում են նաև լայն հասարակական քննարկումներ փոխհատուցումների չափի և ձևերի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Դատարանի կողմից նմանատիպ գործերի քննության ընթացակարգին, ապա Դատարանը որոշել է, որ սույն գործով վճռի կայացման ժամկետից հետո նոր դիմումների ներկայացման դեպքում դրանց քննությունը կհետաձգվի 18 ամսով: Սույն կանոնը չի տարածվում նախքան

սույն վճռի կայացման ժամկետը ներկայացված դիմումների վրա:

Դատարանը սույն գործով խախտված է համարել նաև Կոնվենցիայի հոդված 6-ի § 1-ը և 1-ին Արձանագրության հոդված 1-ը:

Հոդված 41: 280000-1360000 եվրո՝ որպես նյութական և ոչ նյութական վնասի փոխհատուցում

ՀՈՂՎԱԾ 14

Խտրականություն (Հոդված 3)

Նիգերիացի մարմնավաճառի նկատմամբ ենթադրաբար ռասիստական շարժառիթով վատ վերաբերմունքի փաստով իրականացված ոչ արդյունավետ քննություն. խախտում

B.S. v. Spain - 47159/08

Վճիռ 24.7.2012 [III Բաժանմունք]

Փաստեր: Դիմումատուն նիգերիացի կին է, որը հաշվետու ժամանակահատվածում աշխատում էր որպես մարմնավաճառ: 2005թ. դիմումատուն հարցաքննվել է հանցագործության երեք դեպքերի կապակցությամբ: Հարցաքննության ժամանակ նա պնդել է, որ հանցագործության երեք դեպքերից յուրաքանչյուրում ինքը ենթարկվել է ծեծի և վիրավորանքի՝ ռասայական հողի վրա: Ծեծի և վիրավորանքի երրորդ դեպքից հետո դիմումատուն հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել և բուժզննման նպատակով այցելել բուժհիմնարկ: 4-րդ անգամ հարցաքննվելուց հետո դիմումատուն

ներկայացրել է մեկ ուրիշ գանգատ, որում նա, ի թիվս այլ հանգամանքների, պնդել է, որ <<եվրոպական ֆենոտիպով>> կանայք ոստիկանության կողմից չեն կանգնեցվում: Դիմումատուը կրկին անգամ գնացել է բուժհաստատություն՝ բուժզննության:

Իրավունք: Հոդված 3

(ա) *Դատարարական մոտեցում:* Իրավասու պետական մարմինների կողմից պատշաճ քննություն չի իրականացվել մի քանի առումով. մասնավորապես, դատարարական միակ փաստաթուղթը, որը պատշաճ քննության է առնվել վարույթն իրականացնող մարմինների կողմից, եղել է տվյալ գործով որպես մեղադրյալ անցնող ոստիկանների՝ ի պաշտոնե վերադասի կողմից ներկայացված զեկուցագիրը, իրավասու մարմինները մերժել են հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց ճանաչման ներկայացնել՝ օգտագործելով երկկողմանի հայելին, ինչպես նաև վարույթ իրականացնող մարմինների կողմից համապատասխան գնահատական չի տրվել բժշկական փորձաքննության արձանագրություններին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ քննությունը չի եղել բավարար չափով բազմակողմանի և արդյունավետ ու հետևաբար չի համապատասխանել Կոնվենցիայի հոդված 3-ի պահանջներին:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

(բ) *Նյութաիրավական մոտեցում:* Բժշկական փորձաքննության արձանա-

գրությունները համոզիչ չեն, այն իմաստով, որ չեն տալիս հետևյալ հարցերի պատասխանը՝ ինչպես կամ ինչի հետևանքով են առաջացել դիմումատուի վնասվածքները, և արդյոք գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա հնարավոր չէր անվերապահորեն ստույգ որոշել այդ վնասվածքների պատճառը:

Եզրակացություն՝ խախտում չկա (միաձայն):

Հոդված 14՝ համակցության մեջ Հոդված 3-ի հետ (*դատավարական մոտեցում*): Եվրոպական դատարանը կրկին անգամ ուշադրություն է հրավիրում պետությունների՝ Կոնվենցիայի հոդված 3-ով նախատեսված ընթացակարգային պարտավորության վրա, այն է՝ քննության առնել այն հանգամանքը, թե արդյոք որևէ կապ կա ռասիստական վերաբերմունքի և բռնության ակտի միջև: Սույն պարտավորությունը ենթադրվում է նաև հոդված 14-ի շրջանակներում, այն է՝ առանց խտրականության ապահովել Կոնվենցիայի հոդված 3-ով նախատեսված հիմնարար արժեքի պահպանումը: Վերը նշված երկու հոդվածների փոխգործողության հետևանքով, սույն գործի հանգամանքներին համանման հանգամանքները կարող են քննության առնվել կամ միայն այդ հոդվածներից մեկի շրջանակներում, կամ միաժամանակ վերը նշված երկու հոդվածների շրջանակներում: Իր գանգատներում դիմումատուն մատնաշել էր հանցագործության կատարման հնարավոր ռասիստական շարժառիթներ: Նրա փաստարկները

ներպետական դատարանների կողմից քննության չեն առնվել: Դատարանների կողմից պատշաճ կարևորություն չի տրվել նաև այն հանգամանքին, որ դիմումատուի կարգավիճակը հատկապես խոցելի է, քանզի նա աֆրիկացի կին է և աշխատում է որպես մարմնավաճառ: Այսպիսով Կառավարությունը չի կատարել Կոնվենցիայով նախատեսված իր պարտավորությունը՝ ձեռնարկելու բոլոր հնարավոր միջոցները պարզելու համար, թե արդյոք վերը նշված դեպքերում խտրական վերաբերմունքն առկա եղել է, թե ոչ:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 41: 30000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում

Խտրականություն (1-ին Արձանագրության Հոդված 3)

Դատական որոշումը, որով պետությունից պահանջվում է միջոցներ ձեռնարկել ներկայացուցչական ընտրությունների ժամանակ խիստ պահպանողական բողոքական կուսակցության ընտրական ցուցակում կանանց ընդգրկվելու հնարավորությունն ապահովելու ուղղությամբ. ըստ էության քննության ենթակա չէ

*Staatkundig Gereformeerde Partij
v. the Netherlands* - 58369/10
Վճիռ 10.7.2012 [III Բաժանմունք]

Փաստեր: Դիմումատու կուսակցությունը դավանում է հասարակական կյանքի



բոլոր ոլորտներում Աստծո խոսքի բացարձակ իշխանության գաղափարը: Դիմումատու կուսակցությունը մերժում է մարդկանց բացառիկ հավասարության գաղափարը:

Ըստ էության կուսակցության գաղափարախոսությունն արտահայտում է այն համոզմունքը, որ չնայած բոլոր մարդիկ հավասարապես արժեքավոր են որպես Աստծո կողմից ստեղծված արարածներ, այդուհանդերձ մարդիկ միմյանցից տարբերվում են իրենց բնավորությամբ, ունակություններով և հասարակական դիրքով, ու այդ տարբերությունը պետք է ճանաչվի: Այսպիսով ըստ դիմումատու կուսակցության գաղափարախոսության՝ չնայած կանայք չեն ստորակարգվում տղամարդկանց նկատմամբ, քանզի և տղամարդիկ, և կանայք հանդիսանում են մարդ արարած, կանայք չպետք է ունենան հանրային պաշտոններում ընտրվելու իրավունք: Հասարակական մի շարք միավորումներ և կազմակերպություններ քաղաքացիական հայց են ներկայացրել շրջանային դատարան դիմումատու կուսակցության դեմ: Շրջանային դատարանի որոշումից հետո կուսակցությունը փոփոխություններ է կատարել իր սկզբունքներում, որոնց արդյունքում թույլատրվել է կանանց անդամակցումը կուսակցությանը, սակայն հանրային մարմինների ընտրություններին կանանց թեկնածության առաջադրման արգելքը պահպանվել է: 2010թ. կայացված որոշմամբ Գերագույն դատարանն անընդունելի է համարել ի կատարումն իր գաղափարախոսության հիմնադրույթների՝ դիմումատու կուսակցության կողմից ներկայացուցչական

հանրային մարմինների ընտրություններում թեկնածուների առաջադրման պրակտիկան: Գերագույն դատարանն իր որոշման մեջ նշել է նաև, որ Պետության դիրքորոշումը, որով պետությունը, հասարակական հարաբերություններում կատարելով հավասարակաշռող դեր, կարող է ձեռնպահ մնալ սույն կուսակցության կողմից որդեգրված նման գործելակերպի կապակցությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելուց, սխալ է: Գերագույն դատարանի որոշումից հետո Պառլամենտի Ստորին պալատի՝ ներին գործերի մշտական հանձնաժողովը որոշել է առկախել խնդրո առարկա հարցով իր հետագա գործողությունները, մինչև հրապարակվի Եվրոպական դատարանի դիրքորոշումը սույն գործի վերաբերյալ:

Իրավունք: 1-ին Արձանագրության Հոդված 3 - Եվրոպական դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ ժողովրդավարությունը Կոնվենցիայի տառին և ոգուն համապատասխան քաղաքական միակ մոդելն է: Ավելին՝ գենդերային հավասարության սկզբունքի պաշտպանությունն ու կենսագործումն անդամ պետություններում թույլ չի տալիս պետություններին հասարակության մեջ տղամարդկանց դերը դիտարկել որպես հիմնական, իսկ կանանց դերակատարումը՝ որպես երկրորդական: Այն փաստը, որ ոչ մի կին ցանկություն չի հայտնել ընտրություններին առաջադրվել որպես դիմումատու կուսակցության թեկնածու, էական նշանակություն չունի: Քիչ տարբերություն կա նաև՝ արդյոք

գենդերային հավասարության հիմնարար քաղաքական սկզբունքի մերժումը բացահայտորեն տեղ է գտել դիմումատու կուսակցության կանոնադրության մեջ կամ կուսակցության այլ ներքին փաստաղթերում, թե ոչ: Սույն դեպքում կարևորն այն է, որ վերը նշված մոտեցումը կուսակցության կողմից գործնականում կիրառվում է և պաշտպանվում: Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանն անընդունելի է համարում սույն հարցի կապակցությամբ դիմումատու կուսակցության դիրքորոշումը՝ անկախ կուսակցության կողմից խորապես պահպանվող կրոնական դոգմաների, որոնց վրա կուսակցությունը հիմնված է:

Եզրակացություն՝ դիմումի՝ վարույթ ընդունելը մերժվել է որպես բացահայտորեն անհիմն:

ՀՈԴՎԱԾ 18

Ոչ իրավաչափ նպատակներով կիրառված սահմանափակումներ

Ընդդիմության առաջնորդին ազատությունից զրկելն այլ պատճառներով, քան հանցագործություն կատարելու ողջամիտ կասկածի հիման վրա նրան իրավասու պետական մարմին բերելը. խախտում

Lutsenko v. Ukraine - 6492/11
Վճիռ 3.7.2012 [V Բաժանմունք]

Փաստեր: Դիմումատուն ներքին գործերի նախկին նախարար է, որը գլխավորում է ընդդիմադիր քաղաքական կուսակցություն: 2010թ. նոյեմբերի 2-ին դիմումատուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ

իր նախկին վարորդի համար նրա աշխատանքային գործունեության հետ կապված, օրենքով կամ այլ իրավական ակտերով չնախատեսված հատուցումներ սահմանելու համար: Դիմումատուի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրությունը չհեռանալու մասին: 2010թ. դեկտեմբերի 13-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել և հնարավորություն է տրվել ծանոթանալու քրեական գործի նյութերին: Քրեական գործի նյութերը ծանոթացման նպատակով դիմումատուին և նրա պաշտպանին տրամադրվել են 10 օր ուշացումով, ենթադրաբար այն պատճառով, որ քրեական գործի նյութերի մի մասը դեռ պատրաստ չէր: Միաժամանակ շաբաթաթերթերից մեկը տպագրել է դիմումատուի հետ իր ունեցած հարցազրույցը, որտեղ դիմումատուը հերքել է իրեն ներկայացված մեղադրանքները: 2010թ. դեկտեմբերի 24-ին դատախազը նոր քրեական գործ է հարուցել դիմումատուի նկատմամբ՝ կապված խուզարկության և առգրավման գործողությունների ապօրինի արտոնման հետ: Մեկ օր անց քննիչը միջնորդություն է ներկայացրել դատարան առաջին քրեական գործով դիմումատուի խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին փոփոխելու և որպես խափանման միջոց՝ նախնական կալանքը ընտրելու վերաբերյալ: Քննիչը, որպես ներկայացված միջնորդության հիմնավորում, նշել է մեղադրյալի կողմից քրեական գործի նյութերին չծանոթանալը, որոշակի քննչական գործողություններին չմասնակցելը, ինչպես

նաև պնդել է, որ դիմումատուի՝ մամուլում տեղ գտած հայտարարությունները նպատակ ունեն խեղաթյուրել հանրային կարծիքը և ճնշում գործադրել նախաքննության ու դատաքննության նկատմամբ: Հաջորդ օրը (դեկտեմբերի 26 - ին) դիմումատուն իր տան մոտ ձերբակալվել է: Դիմումատուի խոսքերով, նա չի տեղեկացվել ձերբակալման պատճառների մասին և չի ստացել իրեն որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը: Ձերբակալվելուց հետո դիմումատուն բերվել է դատարան, որը, առանց դիմումատուի ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը քննության առնելու, իր որոշմամբ բավարարել է քննիչի միջնորդությունը և դիմումատուի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել նախնական կալանքը: Հետագայում կալանքի ժամկետը անորոշ ժամկետով երկարաձգվել է:

Իրավունք: Հոդված 5 § 1

(ա) *2010թ. դեկտեմբերի 26-ին դիմումատուի ձերբակալումը* - Դիմումատուը ձերբակալվել է իր նկատմամբ հարուցված երկրորդ քրեական գործի շրջանակներում և դատարան է բերվել ձերբակալմանը հաջորդող օրը: Դատարանը քննության է առել միայն առաջին գործի շրջանակներում ներկայացված միջնորդությունը, քանզի քրեական հետապնդման մարմինները կարողացել են բացառել դիմումատուի ձերբակալման հարցի քննությունը: Վարույթն իրականացնող մարմինների նման վարքագիծը հուշում է, որ դիմումատուի ձերբակալման նպատակը

ոչ թե նույն քրեական գործի շրջանակներում դիմումատուին իրավասու դատարան բերելն է, այլ մեկ ուրիշ քրեական գործով նրա խափանման միջոցի փոփոխման և որպես խափանման միջոց՝ նախնական կալանքի կիրառման միջնորդության քննությանը դիմումատուի մասնակցության ապահովումն է: Ավելին՝ դիմումատուի ձերբակալումը չէր կարող համարվել անհրաժեշտ նրա հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար, քանզի դիմումատուն համարյա մեկ տարի առաջ դադարեցրել է իր նախկին պաշտոնից բխող լիազորությունների իրագործումը: Դատարանին չի թվում նաև, որ դիմումատուի ձերբակալումն անհրաժեշտ էր քննությունից նրա խուսափելը կանխելու նպատակով, որովհետև այս կապակցությամբ դիմումատուն հավաստիացումներ է տվել նույն այն քննիչին, որը հետագայում ձերբակալել է նրան: Այսպիսով ձերբակալումն իրականացվել է այլ նպատակով, քան նախատեսված է Կոնվենցիայի հոդված 5-ի պար.1-ով և հանդիսանում է կամայական: Եզրակացություն՝ խախտում (միաձայն)

(բ) *Դիմումատուի կալանավորումը* - Դիմումատուին կալանավորելու վերաբերյալ դատարանի որոշման հիմքերը խնդրահարույց են: Դիմումատուին կալանավորելու՝ իրավասու պետական մարմինների կողմից մատնանշված առաջին հիմքը քրեական գործի նյութերի ուսումնասիրման գործընթացի ձգձգումն է: Դատարանը գտնում է, որ վերը նշված դեպքում կալանավորումը չի հանդիսանում ադեկվատ միջոց:

Բացի այդ, հարկ է ընդգծել, որ Կառավարության կողմից բացատրություն չի ներկայացվել դիմումատուին կալանավորելու երկրորդ պատճառի այն է՝ մամուլում արված նրա հայտարարությունների կապակցությամբ: Ակնկալվում է, որ դիմումատուն՝ որպես քաղաքական հայտնի գործիչ, կարող է իր կարծիքն արտահայտել իր նկատմամբ հարուցված քրեական գործի վերաբերյալ, և որևէ հիմնավորում չկա իր խոսքի իրավունքն իրացնելու կապակցությամբ դիմումատուին ազատությունից զրկելու համար: Կառավարության կողմից ներկայացված, կալանավորումն արդարացնող հաջորդ հիմքը դիմումատուի կողմից ցուցմունք տալուց և իր մեղքն ընդունելուց հրաժարվելն է: Սույն հիմնավորումը հակասում է արդար դատաքննության իրավունքի կարևոր տարրերին՝ իր դեմ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքին և անմեղության կանխավարկածին: Այն փաստը, որ պետական մարմինների կողմից առաջ են քաշվել անձին կալանավորելու նման հիմքեր, հատկապես անընդունելի է, քանզի դա ցույց է տալիս, որ անձը կարող է ենթարկվել պատժի՝ արդար դատաքննության իր հիմնարար իրավունքից օգտվելու համար: Ի հավելումն վերոգրյալի՝ նախնական կալանքի ժամկետի երկարաձգումը, առանց կալանքի տևողությունը նշելու, ինքնին հակասում է Կոնվենցիայի հոդված 5-ի պահանջներին:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 18՝ համակցության մեջ Հոդված 5-ի հետ: Դիմումատուն իր դիմումում նշում է նաև, որ իր ձերբակալումը և իր նկատմամբ քրեական հետապնդումը նպատակ են հետապնդում մեկուսացնել իրեն քաղաքական կյանքից և թույլ չտալ իրեն մասնակցելու գալիք պառլամենտական ընտրություններին: Կառավարությունը վիճարկում է Կոնվենցիայի հոդված 18-ի՝ սույն գործով կիրառելության հարցը՝ նշելով, որ դիմումատուի ձերբակալումն ու կալանքը հետապնդել են միայն հոդված 5-ով նախատեսված նպատակներ: Դատարանն ի գիտություն է ընդունում այն փաստը, որ Ոսկրախնայում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո դիմումատուն, որը նախկին վարչակազմի օրոք զբաղեցրել նախարարի պաշտոն և հանդիսանում է ճանաչված քաղաքական կուսակցության առաջնորդ, մեղադրվել է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու մեջ ու ենթարկվել է քրեական հետապնդման: Դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդումն օտարերկրյա դիտորդների կողմից որոկվել է որպես ընդդիմության առաջնորդների նկատմամբ քաղաքական դրդապատճառներով իրականացվող քրեական հետապնդում: Դիմումատուի գործը Ոսկրախնայի նախկին վարչապետ Տիմոշենկոյի գործի նման մեծ ուշադրության է արժանացել թե երկրի ներսում և թե միջազգային մակարդակում: Այսպիսով առկա են բավարար պատճառներ, որպեսզի Դատարանը դիմումատուի կալանքի հարցը քննի հոդված 18-ի տեսանկյունից:

Կոնվենցիայի ամբողջ կառուցվածքը հիմնված է այն կանխավարկածի վրա, որ ներպետական մարմինները գործում են բարեխղճորեն, և այն դիմումատուն, որը պնդում է, որ իր իրավունքները և ազատությունները ոչ պատշաճ հիմքով սահմանափակվել են, պետք է համոզիչ կերպով ցույց տա, որ պետական մարմինների իրական նպատակը չի համապատասխանում Կոնվենցիայի տառին և ոգուն: Դիմումատուի գործում Դատարանն արդեն փաստել է, որ դիմումատուին ազատությունից զրկելու վերաբերյալ իրավասու պետական մարմինների կողմից առաջ քաշված հիմքերը չեն համապատասխանում հոդված 5-ին և հակասում են Կոնվենցիայի ոգուն: Հաշվի առնելով դիմումատուի կենսագրությունը և ներգրավվածությունը քաղաքականության մեջ՝ դիմումատուի կողմից ողջամիտ քայլ է մամուլով պատասխանել պաշտոնի չարաշահման վերաբերյալ իրեն ուղղված մեղադրանքներին: Սակայն, երբ պետական մարմինները դիմումատուին կալանավորելու մեջնորդություն են ներկայացրել դատարան, նրանք՝ որպես դիմումատուին կալանավորելու հիմքերից մեկը, նշել են դիմումատուի հայտարարությունները մամուլում և դիմումատուին մեղադրել են իր կողմից կատարված հանցագործությունների առնչությամբ հանրային կարծիքը խեղաթյուրելու մեջ: Իշխանության մարմինների նման հիմնավորումները պարզորոշ ցույց են տալիս պետական մարմինների փորձը պատժելու դիմումատուին իրենց առաջադրված մեղադրանքների հետ հրապարակային անհամաձայնություն հայտնելու և իր

անմեղությունը պնդելու համար. գործողություններ, որոնք դիմումատուն իրավունք ուներ կատարել: Այդպիսի հանգամանքներում Դատարանը չի կարող գալ այլ եզրակացության քան այն, որ դիմումատուն զրկվել է ազատությունից ոչ միայն հանցագործություն կատարելու վերաբերյալ ողջամիտ կասկածի հիման վրա նրան իրավասու մարմին բերելու, այլև այլ պատճառներով:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն)
Դատարանը գտնում է նաև, որ խախտվել են դիմումատուի՝ հոդված 5-ի պար. 2-ով (դիմումատուին ձերբակալելու հիմքերի մասին նրան չհայտնելը), հոդված 5-ի § 3-ով (անհապաղ դատավորի մոտ բերվելու իրավունքը) և հոդված 5-ի պար. 4-ով (դիմումատուի կալանքի օրինականության և հիմնավորվածության պատշաճ դատական վերանայումը) նախատեսված իրավունքները:

Հոդված 41: 15000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

ՀՈԴՎԱԾ 34

Խնդրագրի իրավունքի իրականացման խոչընդոտումը

Իրավասու պետական մարմինների մերժումը դատապարտյալին տրամադրել իր գործում առկա որոշակի փաստաթղթեր, որոնք դատապարտյալին անհրաժեշտ էին Դատարանին ներկայացված իր դիմումը հիմնավորելու համար:

Պետական մարմինների գործողությունները չեն համապատասխանում հոդված 34-ի դրույթներին

Vasiliy Ivashchenko v. Ukraine - 760/03

Վճիռ 26.7.2012 [V Բաժանմունք]

Փաստեր: 1998թ. ապրիլին դիմումատուն ձերբակալվել է ծանրացուցիչ հանգամանքներով կողոպուտ և սպանության կատարելու կասկածանքով: Քրեական գործի քննության ընթացքում դիմումատուն պետական տարբեր մարմիններ գանգատ է ներկայացրել իր նկատմամբ ոստիկանության վատ վերաբերմունքի կապակցությամբ, սակայն անարդյունք: 2002թ. հունվարին դիմումատուն քրեական օրենքի մի քանի կետով ցմահ ազատազրկման է դատապարտվել ծանրացուցիչ հանգամանքներում կողոպուտի կատարման, ծանր մարմնական վնասվածքների պատճառման և սպանության կատարման համար: 2002թ. հուլիսին դիմումատուի վճռաբեկ բողոքը Գերագույն դատարանի կողմից մերժվել է: 2002թ. նոյեմբերին Եվրոպական դատարան դիմում ներկայացնելուց հետո՝ 2004թ. դիմումատուն խնդրել է առաջին ատյանի դատարանին իրեն տրամադրել ազատազրկման վայրում իր բժշկական հետազոտության արձանագրությունների պատճենները և քրեական գործի հետ առնչվող այլ փաստաթղթեր: Առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումատուի խնդրանքը այն հիմքով, որ փաստաթղթերի պատճենների տրամադրումը չի մտնում իր գործառույթների մեջ, և այդպիսի գործողությունների համար չկան համապա-

տասխան նյութական միջոցներ: Դիմումատուն բողոքարկել է առաջին ատյանի դատարանի որոշումը, բայց նրա բողոքները մերժվել են:

Իրավունք

Հոդված 34 - Դիմումատուն Դատարան է դիմել այն բանից հետո, երբ սպառվել են իրավունքների պաշտպանության ներպետական բոլոր միջոցները: Դիմումատուին հնարավորություն չի տրվել օգտվելու քրեական գործի նյութերից, դրանցից վերցնել գրավոր կամ այլ միջոցներով ստացված պատճեններ: Այն փաստը, որ դիմումատուի ներկայացրած դիմումը հասել է Դատարան, չի բացառում, այն հանգամանքը որ հնարավոր է՝ եղել է միջամտություն դիմումատուի անձնական պետիցիա ներկայացնելու իրավունքին: Սույն պարագայում Ուկրաինան չի կատարել Կոնվենցիայի հոդված 34-ով նախատեսված իր պարտավորությունը, այն է՝ դիմումատուի համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հնարավոր լինի Դատարանի կողմից նրա դիմումի պատշաճ և արդյունավետ քննությունը:

Եզրակացություն՝ Կոնվենցիայի հոդված 34-ի խախտում (միաձայն):

Հոդված 46: Սույն գործը երկրորդն է *Naydyan v. Ukraine* գործից հետո, որում Դատարանը խախտված է համարել Կոնվենցիայի հոդված 34-ը, որովհետև դատապարտյալը, լինելով համապատասխան պետական մարմիններից կախյալ վիճակում, հնարավորություն չի ունեցել արդյունավետորեն օգտագործել

այն փաստաթղթերը, որոնք իրեն անհրաժեշտ են եղել Դատարանի առջև իր դիմումը հիմնավորելու համար: Անձնական խնդրագրի իրավունքի խախտման հետ առնչվող նմանատիպ գանգատներ առկա են Ուկրաինայի դեմ մի շարք այլ գործերում, որոնց քննությունը դեռ չի ավարտվել: Սույն գործերից 23-ի վերաբերյալ Դատարանի կողմից համապատասխան հարցումներ են ուղարկվել Կառավարությանը: Այսպիսով խոսքը գնում է մի համակարգային խնդրի մասին, որը պահանջում է ընդհանուր բնույթի միջոցների ձեռնարկում:

Սույն խնդրի պատճառը հստակ և հատուկ ընթացակարգի բացակայությունն է, որը թույլ կտա դատապարտյալներին ձեռք բերել գործի հետ կապված փաստաթղթերը՝ կամ դրանցից անձամբ պատճեններ վերցնելով, կամ համապատասխան մարմինների միջոցով ստանալով դրանց կրկնօրինակները: Չնայած այն հանգամանքին, որ Ուկրաինայում գործում են համապատասխան կանոնակարգեր, որոնք նախատեսում են պետական մարմինների կողմից պահվող փաստաթղթերի, այդ թվում դատական գործերի նյութերի հանրային հասանելիություն՝ ներպետական դատարանները չեն համարում, որ իրենք պարտավոր են օժանդակել դատապարտյալներին իրենց վերաբերող գործի նյութերի պատճենները ձեռք բերելու գործում: Գոյություն չունի որևէ ապացույց, որը կվկայի, որ քրեակատարողական հիմնարկների վարչակազմերը կատարում են դատապարտյալներին օժանդակելու՝ բանտային կանոնակարգերով նախա-

տեսված իրենց պարտականությունը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ պետությունը պետք է անհապաղ ձեռնարկի համապատասխան օրենսդրական և վարչական միջոցներ, որոնք կերաշխավորեն, որ ազատությունից զրկված անձինք հնարավորություն ունեն արդյունավետորեն օգտվելու այն փաստաթղթերից, որոնք անհրաժեշտ են Դատարանին ներկայացված դիմումներում տեղ գտած գանգատները հիմնավորելու համար: Դատարանը նաև միաձայն գտնում է, որ խախտվել է Կոնվենցիայի հոդված 3-ը՝ նյութափրավական առումով, և բացակայում է հոդված 34-ի որևէ խախտում՝ կապված դիմումատուի՝ Դատարանին ուղղված նամակների առաքման հետ:

Հոդված 41: 12000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է

ՀՈԴՎԱԾ 35 հոդված 35 § 1

Վեցամսյա ժամկետ

Դիմումի ներկայացումը դիմումատուների հարազատի անհետացումից ինը տարի անց՝ գործի ներպետական քննության շարունակման պայմաններում. նախնական առարկությունը մերժվել է

Er and Others v. Turkey - 23016/04
Վճիռ 31.7.2012 [II Բաժանմունք]

Փաստեր: 1995թ.՝ զինված բախումից հետո 9 դիմումատուների մերձավոր հարազատը ենթադրաբար զինվորների

կողմից դուրս է բերվել գյուղից, որից հետո նրա մասին որևէ տեղեկություն չի եղել: Անձի անհետացման օրը դիմումատուներն այդ մասին տեղեկացրել են դատախազին, ում նախաձեռնությամբ սկսվել է քննություն, որը այնուհետև շարունակվել է զինվորական դատախազի կողմից: Քննությունը չի կարողացել լույս սփռել դիմումատուների անհետացած հարազատի ճակատագրի հարցում, և 2004թ. մայիսին դիմումատուները դիմում են ներկայացրել Եվրոպական դատարան: Կառավարությունն, ի թիվս այլ առարկությունների, Դատարան է ներկայացրել առարկություն առ այն, որ դիմումատուները խախտել են Դատարան դիմելու համար Կոնվենցիայի հոդված 35-ի պար 1-ով նախատեսված վեցամսյա ժամկետը:

Իրավունք: Հոդված 35 § 1 - Դատարանը, վերահաստատելով *Varnava and Others*⁷ գործում արտահայտված իր դիրքոշումը, նշում է, որ մարդկանց անհետացման հետ առնչվող գործերում առավել, քան սպանությունների գործերում, անհետ կորածների հարազատների համար դժվար է գնահատել տեղի ունեցողը կամ այն, ինչ կարող է տեղի ունենալ: Դա է պատճառը, որ հաշվի առնելով անձի անհետացումից հետո նրա հարազատների մոտ հաճախակի առաջացող անորոշությունը և շփոթվածությունը, նրանց գործողություններին չպետք է անվերապահ գնահատական տալ: Նմանապես

Դատարան դիմելու ժամանակային սահմանափակումն անհետ կորած անձանց հարազատների դեպքում չպետք է չափազանց խիստ կիրառում ունենա: Հարկ է նշել նաև, որ ավելի նպատակահարմար է հնարավորության սահմաններում գործերի քննությունն իրականացնել, փաստական հանգամանքներն ու մնացյալ հարցերը ուսումնասիրել ներպետական մակարդակում և նոր միայն դիմել Եվրոպական դատարան: Վերը նշված պատճառներով Դատարանը մարդկանց անհետացման գործերով վեցամսյա ժամանակահատվածի պահպանվածությանը նվազ կարևորություն է տալիս: Այդուհանդերձ խնդրո առարկա գործը, ի տարբերություն *Varnava and Others* գործի, չի առնչվում որևէ միջազգային հակամարտության, և դիմումատուները հնարավորություն ունենին անձամբ դիմել քննություն իրականացնող մարմիններին ու հետևել գործի քննության ընթացքին: Այդ պատճառով դիմումատուների գործողությունները Դատարանի կողմից քննության կառնվեն ավելի խիստ պրիզմայով: Դիմումատուները զինվորականների կողմից իրենց հարազատի կալանավորումից հետո այդ մասին անհապաղ տեղեկացրել էին դատախազին: Դիմումատուները համագործակցել են դատախազի և զինվորական դատախազի հետ, նրանց ներկայացրել դեպքի ականատեսների վկայությունը: Իրավաբանը, որը ներկայացնում էր դիմումատուների շահերը, նույնպես կապ էր պահպանում զինվորական դատախազների հետ և նրանց դիմում քննության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու խնդրանքով:

⁷ *Varnava and Others v. Turkey* [GC], թիվ. 16064/90 և մյուսները, 18 սեպտեմբերի 2009թ. Նախադեպային տեղեկատու No. 122.

Թեև իրականացվող քննությունն իր քննությունը հազվադեպ է հանդիպում, այն իրականացվել է խնդրո առարկա ժամանակահատվածի ընթացքում, և դիմումատուներն արել են իրենցից կախված ամեն ինչ իրավասու պետական մարիններին օժանդակելու նպատակով: Ավելին՝ 2003թ. ոչ զինվորական գործերով դատախազի կողմից կայացված որոշումը, որով դիմումատուների հարազատի անհետացման գործում զինվորականների ներգրավվածության վերաբերյալ ապացույցները ճանաչվել են արժանահավատ և այդ որոշումից հետո զինվերական դատախազի նախաձեռնությամբ սկսված քննությունը դիմումատուները որակել են որպես իրենց հարազատի անհետացման գործի բացահայտման ուղղությամբ կատարվող խոստումնալից զարգացումներ: Սույն հանգամանքներում դիմումատուները ցուցաբերել են անհրաժեշտ բարեխղճություն՝ սպասելով, որպեսզի քննությունը տա որոշակի արդյունքներ:

Եզրակացություն՝ նախնական առարկությունը մերժվել է:

Դատարանը գտել է, որ խախտվել են՝ Կոնվենցիայի հոդված 2-ը (նյութաիրավական և դատավարական մոտեցումներ), հոդված 3-ը (նյութաիրավական մոտեցում), հոդված 5-ը և հոդված 13-ը:

Հոդված 41: 65000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում և 60000 եվրո՝ որպես նյութական վնասի փոխհատուցում:

ՀՈԴՎԱԾ 46

Ուղղորդող վճիռ Ընդհանուր միջոցներ

Պատասխանող պետությունը պետք է ներկայացնի պաշտպանության արդյունավետ միջոցներ՝ անշարժ գույքի սեփականատերերի փոխհատուցման վերաբերյալ վարչական վերջնական որոշումների կատարումն ապահովելու նպատակով:

Manushaqe Puto and Others v. Albania

- 604/07 et al.

Վճիռ 31.7.2012 [IV Բաժանմունք]

(Տես վերևում, Հոդված 13, [էջ 23](#))

Ընդհանուր միջոցներ

Պատասխանող պետությունը պետք է ընդունի համապատասխան օրենքներ՝ երաշխավորելու համար բանտարկյալների իրավունքը օգտագործել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ Եվրոպական դատարան ներկայացված դիմումներում նշված գանգատները հիմնավորելու համար: Վճիռ 26.7.2012 [V Բաժանմունք]

(Տես վերևում, Հոդված 34, [էջ 27](#))

Ընդհանուր միջոցներ Անհատական միջոցներ

Պատասխանող պետությունը պետք է ներկայացնի ձեռնարկված համապատասխան միջոցները երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի համար դատապարտումից հետո ծնողական իրավունքներից ինքնաբերաբար և մշտական կերպով զրկվելու ու

դատական պաշտպանության իրավունքի հասանելիության բացակայության խնդիրների կապակցությամբ:

M.D. and Others v. Malta - 64791/10
Վճիռ 17.7.2012 [IV Բաժանմունք]
(Տես վերևում, Հոդված 8, [էջ 18](#))

Անհատական միջոցներ

Եվրոպական դատարանը հորդորում է պատասխանող պետությանը վերացնել կրոնական կազմակերպության արվող նվիրատվությունների շարունակվող անօրինական ավտոմատ հարկումը:

Association Les Temoins de Jehovah v. France - 8916/05
Վճիռ (արդար բավարարում)
5.7.2012 [V Բաժանմունք]

Ընթացակարգ 2011թ հունիսի 30-ի վճռում (տես [Նախադեպային տեղեկատու No. 142](#)), Եվրոպական դատարանը որոշել է, որ 1993-1996թթ. դիմումատու կազմակերպության օգտին կատարվող նվիրատվությունների հարկումը իրենից ներկայացնում է Կոնվենցիայի հոդված 9-ում ամրագրված իրավունքների իրացման նկատմամբ օրենքով չնախատեսված միջամտություն: Դատարանը նաև խնդրահարույց է համարել Կոնվենցիայի հոդված 41-ի կիրառման հարցը:

Իրավունք

Հոդված 41 - 4590295 եվրո՝ որպես նյութական վնասի փոխհատուցում, որը համապատասխանում է դիմումատու կազմակերպությունից անօրինական

կերպով գանձված գումարի չափին: Ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջը մերժվել է:

Հոդված 46: Հարկի վճարմանը վերաբերող իրավական ակտը, որն իր մեջ ընդգրկում է նաև վճարման ուշացման համար գանձվող տույժերը և տուկոսները, շարունակում է մնալ ուժի մեջ: Հետևաբար վերը նշված գումարների վճարման դադարեցման վերաբերյալ որոշումը հանդիսանում է խախտված իրավունքի վերականգնման պատշաճ ձև, որը կվերացնի արձանագրված խախտումը: Այդուհանդերձ, պատասխանող պետությունը, գտնվելով Նախարարների կոմիտեի մոնիտորինգի տակ, մնում է ազատ ընտրելու Կոնվենցիայի հոդված 46-ով նախատեսված իրավական պարտավորության կատարման այլ միջոցներ:

ԳՈՐԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՄԵԾ ՊԱԼԱՏԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ

Հոդված 43 § 2

Հետևյալ գործերը ներկայացվել են Մեծ պալատի քննությանը՝ համաձայն Կոնվենցիայի հոդված 43-ի պար 2-ի՝
Vinter and Others v. the United Kingdom - 66069/09, 130/10 and 3896/10
Վճիռ 17.1.2012 [IV Բաժանմունք]
(Տես վերևում, Հոդված 3, [էջ 9](#))
Pastorul cel Bun v. Romania - 2330/09
Վճիռ 31.1.2012 [III Բաժանմունք]
(Տես վերևում Հոդված 11, [էջ 23](#))

ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ՝ ԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ՄԵԾ ՊԱԼԱՏԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ



Հոդված 30

Allen v. the United Kingdom - 25424/09
[IV Բաժանմունք]
(Տես վորևում, Հոդված 6 § 2, էջ 12)

Maktouf v. Bosnia and Herzegovina - 2312/08
Damjanovic v. Bosnia and Herzegovina - 34179/08 [IV Բաժանմունք]
(Տես վերևում, Հոդված 7 § 1, էջ 12)

ԴԱՏԱՐԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Հերագրական զեկույցներ

Եվրոպական դատարանի համացանցային կայքում (<www.echr.coe.int> – Case-Law) հրապարակվել են երկու նոր հետազոտական զեկույցներ: Առաջինը, որը հրապարակված է անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, վերաբերում է գործը վարույթ ընդունելու նոր չափանիշին, իսկ երկրորդը, որը ներկայացված է միայն անգլերեն լեզվով, նվիրված է բիոէթիկային:

Կոնվենցիայի հոդված 35 § 3(b)-ի շրջանակներում գործի ընդունելիության նոր չափանիշ. նախադեպային իրավունքի սկզբունքները, երկու տարի (անգլերեն)

[The new admissibility criterion under Article 35 § 3 (b) of the Convention: case-law principles two years on] (eng)
[Le nouveau critere de recevabilite insere a l'article 35 § 3 b) de la Convention : les principes jurisprudentiels deux ans apres son introduction] (fra)

Բիոէթիկան և Դատարանի նախադեպային իրավունքը (անգլերեն)

[Bioethics and the case-law of the Court]

Դատարանը՝ համառոտ

Սույն թռուցիկը, որը ամփոփ կերպ ներկայցնում է Դատարանի գործունեությունը, ինչպես նաև Կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կառուցվածքը, ներկայում հասանելի է տպագիր և էլեկտրոնային տարբերակներով ու հետևյալ լեզուներով՝ չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, ռուսերեն և իսպաներեն: Թռուցիկը թարգմանվելու է Եվրոպայի խորհրդի բոլոր Անդամ պետությունների լեզուներով: PDF տարբերակները կարող են ներբեռնվել Դատարանի կայքից (<www.echr.coe.int> – The Court):

法院简介 (zho)

The Court in brief (eng)

La Cour en bref (fra)

Der Gerichtshof in Kurze (deu)

La Corte in breve (ita)

О Суде коротко (rus)

El Tribunal en breve (esp)

